

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Եկած է Ձիրար Ամբաստանելու ժամանակը

«ՄԱՍԻՍ»

Հայաստանի նախկին բռնապետ Ռոբերտ Բոչարեան հարցազրույց մը տալով կրկին յայտարարած է, որ ինք ամբողջութեամբ դէմ է Սահմանադրական փոփոխութիւններուն ու պատճառաբանած է որ, առաջարկուող նախագիծը կու գայ Բաղաձայնական մեծաշնորհը ամբարձրելու սահմանադրութեան մէջ եւ ապահովելու մէկ կուսակցութեան գերակայութիւնը, խօսքը ուղղելով իշխող Հանրապետական կուսակցութեան:

«Հրապարակուած նախագիծը գերազանցեց իմ վատագոյն սպասումները», - յայտարարած է Բոչարեան: «Ես այդպիսի ապագայ իմ երկրին չեմ ցանկանում, դրա համար էլ դէմեմ արտայայտում այս փոփոխութիւններին: Կատարում է մի մեծ սխալ, որի հետեւանքները ծայրայեղ վտանգաւոր են Հայաստանի ապագայի համար», - իբրեւ թէ մտահոգ՝ յայտարարած է նախկին պաշտօնեան, որու օրով գործող Սահմանադրութիւնը ոտնակոխելու գրեթէ ամէն ֆայլափոխի:

Հանրապետականները չուշացան հակադարձելու իրենց նախկին գործակիցին: Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով, արձագանքելով հարց ուղղեց. «Էդ արատաւոր համակարգը ե՞րբ է առաջացել. Էսօր է առաջացել, թէ՛ տարիներ առաջ է առաջացել, ո՞րն է դրա ծնող պայմանները, ինչպիսի՞ պայմաններում է առաջացել Էդ արատաւոր համակարգը»:

Ռոբերտ Բոչարեանի մասին տրուած այս գնահատականները տարիներէ ի վեր հնչած են ընդդիմադրութեան կողմէ ու ժողովուրդը լաւապէս ծանօթ է, թէ այսօրուայ Հայաստանի դիմագրուած նգնաժամի ակունքները ուր կը գտնուին: Այսուհանդերձ, ուշագրաւ է որ նախկին դաշնակիցներու միջեւ նման մակարդակի ամբաստանութիւններ կը փոխանակուին:

Ըստ երեւոյթի, Բոչարեանի մօտ տակաւին չեն մարած իշխանութեան վերադառնալու յոյսերը, իսկ խորհրդարանական կառավարման ձեւին անցնելով, նամբան գրեթէ կը փակուի իր փայլած նպատակներուն առջեւ:

Երկու անգամ առանց ընտրուելու նախագահ դարձած անձնաւորութիւնը, ժամանակն է որ անդրադառնայ, թէ իր առջեւ փակ են իշխանութեան վերադարձի դռները, երբ ժողովուրդը չէ մոռցած Հոկտեմբեր 27-ի եւ Մարտ 1-ի սպանդները ու չենքեր իրեն՝ բազմաթիւ այլ մեղքներուն համար:

Հայաստանի Ազգային ժողովը Հաւանութիւն Տուաւ Սահմանադրական Փոփոխութիւններու Նախագծին



Հայաստանի Ազգային ժողովը Հոկտեմբեր 5-ին տուաւ իր համաձայնութիւնը, որ Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծը դրուի հանրաքուէի:

Նախագծին կողմ քուէարկեց 104, դէմ՝ 10, ձեռնպահ՝ 3 պատգամաւոր:

Դէմ քուէարկեցին 7 հոգիներէ բաղկացած ՀԱԿ խմբակցութեան 6 պատգամաւորները՝ Լեւոն Զուրաբեանը, Արամ Մանուկեանը, Ստեփան Դեմիրճեանը, Գագիկ Զհանգիրեանը, Նիկոլ Փաշինեանն ու Հրանդ Բազրատեանը: «Ժառանգութիւն» ու ԲՀԿ խմբակցութիւններէն մէկական պատգամաւորներ՝ Զարուհի Փոստանջեանն ու Տիգրան Ուրիխանեան, 5 հոգինոց Օրինաց

երկիրէն՝ Հեղինէ Բիշարեանն ու Իշխան Խաչատրեանը:

«Բարգաւաճ Հայաստանը թէեւ յայտարարած էր, թէ միաձայն կողմ պիտի քուէարկէ Սերժ Սարգսեանի առաջարկին, սակայն խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեանը, Վահէ Յովհաննիսեանը, Էլինար Վարդանեանը, եւ Ստեփան Մարգարեանը բացակայ էին Խորհրդարանի նիստին: Բացակայ էր նաեւ նախկին արտաքին գործոց նախարար, ԲՀԿ-ն լքած Վարդան Օսկանեանը:

Սահմանադրական փոփոխութիւնները նախագահ Սերժ Սարգսեանի հետ քննարկած ընդդիմա-

Շար.ը էջ 5

Դատարանի Որոշմամբ Իսթանպուլի Քաղաքապետարանը Հայկական Կողմին Պէտք է փոխհատուցէ 40 Միլիոն Տուար

1971 թուականին Պոլսոյ Սուրբ Յակոբ հիւանդանոցին խլուած տարածքի դիմաց, դատարանը պարտաւորեց Քաղաքապետարանին որպէս փոխհատուցում վճարել 111 մլն 850 հազար թրքական լիրա, որ համազօր է մօտ 40 միլիոն տոլարի:

Թուրքական «Հիւր-ըրիշէթ» թերթի փոխանցմամբ՝ Շիշլիի Սուրբ Յակոբ հիւանդանոցի հիմնադրամին պատկանող գերեզմանի տարածքը, որը կը կազմէ 41 հազար քմ, 1930-ին ընդունուած խայտառակ օրէնքով յանձնուած էր Իսթանպուլի քաղաքապետարանին:

Այդ տարածքէն 4 հազար 474 քմ-ը 1971-ին պետականացուած էր եւ վրան ճանապարհ կառուցուած:

Սուրբ Յակոբ հիւանդանոցի հիմնադրամը գերեզմանի տարածքը ետ ստանալու հայցով տարիներ առաջ դիմած էր դատարան եւ դրական պատասխան ստացած: Դատարանի որոշմամբ, հիւանդանոցի հիմնադրամին պէտք է վերադարձուի ամբողջ տարածքը, սակայն պարզուած է, որ տարածքի մէկ մասը, որը 1971-ին ճանապարհ դարձել էր, անկարելի է վերադարձնել: Ճանապարհ դարձած 4 հազար քմ-ի համար Իսթանպուլի քաղաքապետարանը Սուրբ Յակոբ հիւանդանոցի հիմնադրամին պէտք է վճարի նշուած բաւական մեծ գումարը:



Պոլսոյ Սուրբ Յակոբ հիւանդանոցի շէնքը

Այժմ քաղաքապետարանը դիմած է վճարեկ դատարան: Եթէ որոշումը հոն եւս հաստատուի, Իսթանպուլի իշխանութիւններուն այլ ելք չի մնար բացի այդ գումարը վճարելէն:

ՍԴ Հնչակեան Կուսակցութիւնը Կողմ է Սահմանադրական Փոփոխութիւններու Նախագծին

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Երեւանի Կենտրոնական գրասենեակէն ներս տեղի ունեցած՝ ՍԴՀԿ Հայաստանի կազմակերպութեան միջվարչային նիստի ընթացքին որոշուած է դրական արտայայտուիլ Սահմանադրական փոփոխութիւններու Նախագծին:

Խորհրդակցութեան մասնակցած են ՍԴՀԿ Կենտրոնական վարչութեան, Հայաստանի վարչութեան, մարզային եւ Երեւանի մասնաճիւղի ներկայացուցիչներ:

Հնչակեան կուսակցութեան պատասխանատուները ընդգծած են, որ ՍԴՀԿ-ն համակարգային փոփոխութիւններու եւ խորհրդարանական կառավարման համոզուած կողմնակից եղած է եւ կը շարունակէ մնալ:

«ՍԴՀԿ-ն առաջիկայ սահմանադրական բարեփոխումներին տալու է իր դրական քուէն, սակայն միեւնոյն ժամանակ ընդգծում է, որ ո՛չ այս, ո՛չ էլ սահմանադրութեան բարեփոխող տարբերակը չի տալու երկրում առկայ հսկայական սոցիալական խնդիրների լուծումը, եթէ տեղի չունենան խորքային բարեփոխումներ, եւ եթէ դրա համար չլինի համապատասխան քաղաքական կամք», ըսուած է այս առթիւ ՍԴՀԿ Մամլոյ Դիւանի կողմէ հրատարակուած յայտարարութեան մէջ:

9 Հոգիներ Եւս Ձերբակալուած Եւ Հրանդ Տինքի Սպանութեան Հարցով

Հոկտեմբեր 6-ին Պոլսոյ դատախազութիւնը հրաման արձակած է՝ Հրանդ Տինքի սպանութեան հարցով 9 հոգիներու ձերբակալման համար:

Ինչպէս ծանօթ է, Պոլսահայ լրագրող Հանդ Տինք սպանուած էր 2007-ի Յունուար 19-ին, «Ակօս» թերթի խմբագրատան մօտ:

Տինքի սպանութենէն ետք ձերբակալուած՝ 17-ամեայ Օկիւն Սամսաթ դատապարտուած էր ձյ տարուայ բանտարկութեան: Ան ըսած էր թէ, Հրանդ Տինքին սպանած էր «թրքութիւն» վիրաւորելու համար:

Նախապէս կատարուած քննութիւնները եկած էին այն եզրակացութեան, որ նախկին դատախազները, որ այս հարցով զբաղած էին, անտեսած են բաւական լուրջ ամբաստանութիւններ՝ բարձրատիճան ոտիկաններու սպանութեան մէջ մեղակցութեան շուրջ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Վարչապետի ճեռանալու Ամենայարմար ժամանակն է

ՅԱԿՈԲ ԲԱԳԴՍՏՈՒՆԻ

Հոկտեմբերի 1-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց 2016 թվականի պիտույքի նախագիծը: Այն շատ քիչ բանով է տարբերում 2015 թվականի պիտույքից, ինչը վկայում է, որ Հայաստանի տնտեսական կեանքում կառավարությունը չի սպասում առանձնապես շոշափելի փոփոխություններ:

ՀՆԱ աճը նախատեսվում է 2,2 տոկոս: Այդ ցուցանիշը լիարժեք գնահատելու համար հարկ է սպասել, թե ինչ ցուցանիշով կը փակուրտի 2015 թվականը: Կանխատեսումները լավ չեն: Բացի վարչապետ Յովիկ Աբրահամյանից, որեւէ այլ մարդ, անգամ կառավարության ներսում եւ նաեւ արտաքին տնտեսական կառույցներում, չի կանխատեսում տնտեսության 1 տոկոսից ավելի աճ: Շատերը նույնիսկ անկում են կանխատեսում:

Այդ ֆոնին, 2016 թվականի պիտույքի նախագիծը չուշում է, որ կառավարությունը յուր ունի 2016 թվականին մի կերպ պահել իրավիճակը: Չի բացառում, որ մի քիչ ավելի յուր էլ կայ, բայց այդ ավելին պետք է օրինակ ստուգելու պիտույքի համար՝ 2016-ը նախընտրական տարի է եւ պետք է փող հաւաքել 2017 թվականի խորհրդարանի ընտրությունները բաժանելու համար, առաւել եւս, որ 2015-ին հաւաքած փողը հաւանաբար կը բաժանուի սահմանադրական հանրաքուէի համար:

Այդպիսով, Հայաստանը 2016 թվականին էլ կը մնայ տնտեսության գոյապահման ռեժիմի վրայ, եթէ իհարկե տեղի չունենան էական քաղաքական փոփոխություններ:

2016 թվականի պիտույքի նախագիծն այդ տեսանկյունից Յովիկ Աբրահամյանի կառավարության ձայնով մասնաճեղման հաւաստագիրն է: Ազգային ժողով այդ նախագիծը ներկայացնելու փոխարէն, վարչապետը թերեւս պետք է հրաժարականի դիմում ներկայացնէր Սերժ Սարգսյանին:

Չի բացառում, որ Աբրահամյանը ներկայացրած էլ լինի: Ներկայում նրա համար հեռանալու ամենալավ մարտավարական է, որովհետեւ ամէն յաջորդ օրուայ հետ նա հեռանալու է ավելի վատ տնտեսական իրավիճակի ֆոնին:

Բայց, Սերժ Սարգսյանը հենց դրա համար էլ Յովիկ Աբրահամյանին թոյլ չի տալ հեռանալ: Ո՞վ պետք է ապահովի այդ վատ ֆոնը: Ո՞ր մահապարտ կ'ուզի ներկայում գրադեցնել Հայաստանի վարչապետի պաշտօնը: Դեռեւս 2004-05 թվականներին վարչապետ Անդրանիկ Մարգարեանը Հայաստանի վարչապետի պաշտօնը համեմատում էր գլխավորություն թեան՝ այսինքն մահապարտության հետ: Ու դա մի ժամանակ, երբ պետությունն անգիր փող էր գալիս տրանսֆերտների եւ կապիտալ շինարարության ներդրումների տեսքով, արձանագրում էր երկնիշ աճ եւ սոցիալական լարումաժողովները զգալիորէն թուլանում էր: Եթէ այդ պայմաններում Մարգարեանը վարչապետությունը

համարում էր մահապարտություն, պատկերացնել կարելի է, թէ ինչպիսին է վարչապետությունը այժմ:

Այն պատիժ է, որին փաստօրէն Յովիկ Աբրահամյանից ավելի Սերժ Սարգսյանի համար ենթակայ չէ ոչ ոք:

Ստեղծուած իրավիճակում առանցքային նշանակություն ունեցաւ բաշխիչ էլցանցերի վաճառքը: Թէեւ Յովիկ Աբրահամյանը շնորհակալութիւն յայտնեց ցանցերի նոր սեփականատէր Սամուէլ Կարապետեանին, որ համաձայն է ծանր վիճակում ստանձնել ցանցերը, այդուամենայնիւ Աբրահամյանի շնորհակալութեան իմաստը թերեւս Կարապետեանին թիրախ դարձնելն էր:

Վարչապետը փաստացի ակնարկում էր իր շնորհակալութեամբ, թէ ով է սրանից յետոյ պատասխանատու էներգետիկ ոլորտում առկայ վիճակի, էլեկտրաէներգիայի գնի համար:

Բանն այն է, որ Սամուէլ Կարապետեանը ձեռք բերելով ցանցերը, Յովիկ Աբրահամյանին զրկեց մասնաւոր հնարաւորութիւնից: Ցանցերը եւ էներգետիկ համակարգն առանցքային խնդիր էին դարձել տնտեսա-քաղաքական հանգոյցում: Եւ այստեղ խնդիրը տանում էր մինչեւ Ռուսաստանի հետ յարաբերութիւն: Իսկ դա նշանակում էր արդէն ընդհուպ Սերժ Սարգսյանի մակարդակ: Ու քանի որ ցանցերը յայտնուել էին տնտեսա-քաղաքական բարդ կացութեան հիմքում, այդ կացութեան համար պատասխանատուութիւնն էլ փաստացի յայտնուում էր Սերժ Սարգսյանի վրայ՝ թեթեւեւեւեւ Յովիկ Աբրահամյանի ուսը:

Ու որքան մնում էր ցանցերի խնդիրը, այնքան այդ ուսը մնում էր թեթեւ, քանի որ տնտեսութեան ընդհանուր ճգնաժամը հնարաւոր էր դուրս գրել ցանցերի վրայ, հետեւաբար Սերժ Սարգսյանի վրայ: Սամուէլ Կարապետեանը ձեռք բերելով ցանցերը, փաստօրէն Սերժ Սարգսյանին ազատում է այդ բեռից, տնտեսա-քաղաքական հանգոյցի առանցքն է փոխում, ցանցերը հանում է այդ կարգավիճակից եւ այդպիսով վարչապետը մնում է տնտեսութեան ընդհանուր վիճակի հետ դէմ դիմաց, այսինքն բեռն իր ուսին:

Իր շնորհակալութեամբ, Յովիկ Աբրահամյանը փորձում է դրա մի մասը տեղափոխել Կարապետեանի վրայ, հանրութեանը ցոյց տալով, թէ ահա նա, ումից պետք է պահանջել այսուհետեւ:

Բայց, Կարապետեանը ստանձնելով առաջիկայ տարում սուբսիդիայի պարտաւորութեան կէտը, փաստօրէն հանել է իր հասցէին հնարաւոր պահանջները գոնէ մէկ տարուայ համար, Յովիկ Աբրահամյանին թողնելով մենակ:

2016 թվականի պիտույքի նախագիծը Աբրահամյանի միայնութեան վկայութիւնն է: Փաստօրէն ոչ ոք չի համաձայնել աջակցել նրան տնտեսական պատկերի էական փոփոխութեան հասնելու համար՝ թէ ներսից, թէ արտաքին աշխարհից:

«ԼՐԱԳԻՐ»

Պատերազմի Ուրուականը

ՔԱՄԱՐ ԲԱԳԴՍՏՈՒՆԻ

Ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլիայի 70-րդ նստաշրջանում, Ատրպէյճանի արտգործնախարար էլմար Մամեդիարովը դժգոհութիւն է յայտնել Սերժ Սարգսյանի նախօրէին ունեցած ելույթից, այն որակելով «կեղծիքների վրայ հիմնուած»:

Ատրպէյճանի ԱԳ նախարարը կրկին պնդել է Պաքուի կողմից Հայաստանին ներկայացուող մեղադրանքները՝ կապուած «պատերազմի սանձազերծման, ուժի կիրառման» Ատրպէյճանի մէկ-հինգերորդը (Լեռնային Ղարաբաղը «7 շրջանները ներառեալ») գրաւելու հետ: Մամեդիարովն անդրադարձել է նաեւ՝ մէկ միլիոն ատրպէյճանցի փախստականների խնդրին, օգտագործելով «պատերազմական յանցագործութիւն» «մարդկութեան դէմ յանցագործութիւն» արտայայտութիւնները:

Յիշեցնենք, որ Սեպտեմբերի 26-ին Սերժ Սարգսյանը յայտարարել էր՝ «Երբ ես ասում եմ Հայաստանը՝ Լեռնային Ղարաբաղը նրա անբաժան մասն է»: Այս արտայայտութեան կապակցութեամբ, Մամեդիարովը իր ելույթում նշել է, թէ «կտրականապէս մերժում է» այն:

Ըստ Ատրպէյճանի արտգործնախարարի, այդ արտայայտութիւնը ցոյց է տալիս, թէ «Հայաստանի ղեկավարութիւնն ինչքան հեռու է խաղաղութեան կառուցողական փնտռութիւնից»: Ապա, էլմար Մամեդիարովն ասել է, թէ «Լեռնային Ղարաբաղը միշտ եղել է» պետք է մնայ որպէս Ատրպէյճանի անօտարելի մաս», միաժամանակ հնչեցնելով «հայկական զօրքերը յետ քաշելու անհրաժեշտութեան» մասին պնդումը: Վերջինս դարձեալ նշել է, թէ Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանի մաս է կազմում, ու հակամարտութիւնը կարող է կարգաւորուել միայն Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան սկզբունքի հիման վրայ:

«Եթէ բանակցութիւնները չհանգեցնեն Հայաստանի Ջինուած ուժերի դուրսբերմանը Ատրպէյճանի օկուպացուած տարածքներից, Պաքուն ստիպուած կը լինի ուժ կիրառել իր հողերն ազատագրելու համար, ինչը երաշխաւորուած է ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածով», ասել է էլմար Մամեդիարովը՝ ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխաւոր ասամբլեայում:

Ընդհանրապէս, պատերազմով, ռազմական գործողութիւններով ատրպէյճանական ղեկավարութեան շանտաժը մշտապէս քննարկուում է այդ երկրի՝ միջազգային հանրութիւնից պահանջներ ունենալու, Ղարաբաղեան հարցի մասին չիշեցնելու մտադրութիւնների մասին:

Մոռացութեան է մատնուած հարցը, թէ ինչու է նման անհաւասարակշիռ ու անկանխատեսելի կեցուածք որդեգրել Ատրպէյճանի իշխանութիւնը:

Մի կողմից, այդ երկրում գոյութիւն չունի ազդեցիկ ընդդիմութիւնը, որը կարող է հասարակական պայքար ղեկավարել եւ

ընդգրկել ընդդէմ Ալիեւի ռեժիմի: Սակայն միւս կողմից, օդում ավիեւեան կլանի ծանր բեռի զգացողութիւնն է թեւածում:

Եթէ անգամ ատրպէյճանական հասարակութիւնը գիտակցում է, որ Ալիեւի ռեժիմին փոխելու հնարաւորութիւնները նուազ են, ինքը Ալիեւը ներքուստ այդ հնարաւորութիւնը չի բացառել:

Դա պատճառը, որ նա երկարաշունչ ելույթներ է նուիրում իր երկրի «բարգաւաճման», ռազմական պիտույքի եւ ապաստիւման ու քառապատկման թեմաներին: Իսկ ավելի կոնկրետ ուղեբաններ են նրա ելույթների այն հատուածները, որտեղ նա պատմում է, թէ ինչպէս էր արեւմուտքը ծրագրում Ատրպէյճանում «յեղափոխութիւն» իրականացնել եւ տապալել իր իշխանութիւնը:

Այս ամէնն ավելի «գունեղ» դարձնելու համար, Ալիեւը ոչ մի րոպէ չի ցանկանում, որպէսզի հասարակութիւնը մոռանայ դարբաղեան խնդրի մասին: Իսկ դրա մասին չիշեցնելու համար նա գործի է դնում «հայրենասիրութիւն» խաղաղ իր ողջ զինանոցը ու պատմում, թէ որքան է «ուժեղ» Ատրպէյճանը Հայաստանից եւ ինչպէս մի ակնթարթում կարող է «վերադարձնել Ղարաբաղն ու գրաւեալ եօթ շրջանները»...

Իսկ ուրիշ ի՞նչ ասի... Չէ՞ որ մի օր ատրպէյճանական հասարակութիւնն էլ կարող է մոռանալ Ղարաբաղի մասին, կամ եթէ չիշեն՝ հարց տան՝ իսկ ի՞նչ եղան «Ղարաբաղը վերադարձնելու» խոստումները... «ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալսմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massisweekly.com
Updated every Friday

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սահմանադրութեան Նախագծին Կողմ Քուէարկած Ընդդիմադիր Պատգամաւորը Բացատրում է Իր Դիրքորոշումը

Սահմանադրական փոփոխութիւններին նախագծին կողմ քուէարկած Ալեքսանդր Արզումանեանն ասում է՝ չէր կարող սկզբունքներին դէմ գնալ. խորհրդարանական կառավարման համակարգի անցումը ՀՀԾ ծրագրային դրոյթներին է, նաեւ՝ «Ժառանգութեան» նախընտրական խոստումը: Արզումանեանը 2012-ին պատգամաւոր է դարձել ընդդիմադիր այդ ուժի համամասնական ցուցակով:



Պատգամաւոր Ալեքսանդր Արզումանեան

Արզումանեանը չի կիսում տեսակէտը, թէ Սահմանադրութիւնը փոփոխուում է Սերժ Սարգսեանի վերարտադրութեան համար: Վերարտադրուելու կարճաժամանակահատվածում է, կարծում է, գործող Սահմանադրութիւնն է: «Ինչ Սերժ Սարգսեանի ճակատագիրը չի հետաքրքրում: Ուզում է դաշտում մնալ, կը կեղծի խորհրդարանական ընտրութիւնները, կ'ունենայ մեծամասնութիւն, կը դառնայ վարչապետ: Եւ այս Սահմանադրութիւնը թոյլ է տալիս յաջորդ նախագահին՝ թէկուզ եւ ընդդիմութիւնից, դարձնել ժողովրդի ասած կուռքուռի ձագ»:

Հարցեր են քննարկում, յետոյ դա պարտադրում են իրենց ժողովուրդներին: Այն վարչապետը, որը ներկայացնելու է Հայաստանը, ստիպուած է լինելու գալ Հայաստան, Ազգային ժողովի հետ խորհրդակցի, բաց քննարկում անի, որից յետոյ նոր ինչ-որ թեմայով համաձայնութիւն տայ», - ասաց Արզումանեանը:

Արզումանեանը ո'չ «այո»-ն, ոչ էլ «ոչ»-ը քարոզելու մտադրութիւն չունի: «Մենք ի՞նչ գործունէք դրա հետ: Կ'անցնի, մենք գոհ կը լինենք, չի անցնի, շատ լաւ... թող անեն, իշխանափոխութիւն են անում, թող անեն: Եթէ ինչ ցոյց տան, որ իրենք հնարաւորութիւն ունեն իշխանափոխութեան, ես հենց վաղը փողոցում կողքները կը լինեմ: Բայց սա հերթական անգամ ժողովրդին հիասթափեցնելու մեթոդ է»:

Նախկին արտգործնախարարը կարծում է՝ խորհրդարանական կառավարման համակարգի անցումը եւրոպական ժողովրդավարութիւն կառուցելու եւ Ռուսաստանի բռնապետութիւնից ազատելու հնարաւորութիւն է:

«Երեք դիկտատոր ԵՏՄ-ում հաւաքուած են, իրենք իրենց միջեւ

Լեւոն Զուրաբեանը Սերժ Սարգսեանին Կոչ Արեց Կասեցնել Հանրաքուէի Գործընթացը

Իշխանութիւններն ամէն ինչ արեցին Սահմանադրական փոփոխութիւններին դէմ «Ո՛չ»-ի ճակատի Հոկտեմբերի 5-ի բողոքի ակցիան Ազգային ժողովի դիմաց խոչընդոտելու համար, քանի որ տեղեակ էին, որ ակցիան նախաձեռնած «Ձէք Անցկացնի» նախաձեռնութեան անդամները մտադիր են հրապարակել «Ո՛չ»-ի ճակատի պայքարի հետագայ գործողութիւնները:

րի գործընթացի տապալումից», - ասաց Լեւոն Զուրաբեանը:

Պատգամաւորը յայտարարեց, որ թէեւ ԱԺ-ն ընդունել է հանրաքուէի դնելու որոշման նախագիծը, սակայն Սերժ Սարգսեանը, որպէս երկրի նախագահ, դեռ կարող է կասեցնել այդ գործընթացը:

Լեւոն Զուրաբեանը, «Հայ Ազգային Գոնկրէս» կուսակցութեան անունից նախագահին կոչ արեց օգտուել իր այդ իրաւասութիւնից եւ կասեցնել հանրաքուէի գործընթացը, որը, ըստ նրա, ժողովրդին տանում է պառակտման:

Լեւոն Զուրաբեանը հաւաքուածներին կոչ արեց գնալ ոստիկանութեան Արաբկիրի բաժին, որտեղ տարել են բերման ենթարկուած 21 ակտիւիստներին: Նրա խօսքով՝ ազատուելուց յետոյ հենց ոստիկանութեան առջեւ էլ նախաձեռնութեան անդամները կանեն իրենց յայտարարութիւնը:

Այս մասին ԱԺ-ում «Սահմանադրական բարեփոխումները հանրաքուէի դնելու մասին» որոշման նախագծի ընդունուելուց յետոյ դրսում հաւաքուած ցուցարարներին ասաց ԱԺ ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

«Ոստիկանութեան այսօրուայ ապօրինի գործողութիւնները ցոյց տուեցին, որ իշխանութիւնները ամենից շատ վախենում են սահմանադրական բարեփոխումները

Առանց Սահմանադրական Նոր Նախագծին Ծանօթանալու Սեղմել ԵՆ Կոճակները

«Ժողովուրդ» թերթը գրում է. «ՀՀ ԱԺ-ն երէկ քուէարկեց «ՀՀ Սահմանադրութեան փոփոխութիւններին նախագիծը հանրաքուէի դնելու վերաբերեալ համաձայնութիւն տալու մասին» որոշումը՝ 104 կողմ, 10 դէմ եւ 3 ձեռնպահ քուէարկութեամբ: «Ժողովուրդ»-ը պարզեց, որ նոր Սահմանադրութեան վերջնական նախագիծը պատգամաւորներին բաժանուել է առաւօտեան՝ քուէարկութիւնից մի քանի ժամ առաջ միայն: Մինչդեռ փաստաթուղթը

պատգամաւորները պէտք է ստանային Հոկտեմբերի 2-ին: Սա նշանակում է, որ օրէնսդիրները, նախագծին առանց ծանօթանալու, սեղմել են «կոճակները»:

Ի դէպ, Ռոբերտ Քոչարեանի, այսպէս կոչուած, «թիմը» ներկայացնող պատգամաւորները՝ ի դէմս ԱԺ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւորներ Վարդան Օսկանեանի, Վահէ Յովհաննիսեանի, էլիսնար վարդանեանի եւ Ստեփան Մարգարեանի, չմասնակցեցին նոր Սահմանադրութեան նախագծի քուէարկութեանը:

«Ո՛չ»-ի ճակատը Յաջողութեան Հասնելու Անհրաժեշտ Նախադրեալներ Զուրաբեանը

«Ոտքի՛ Հայաստան» քաղաքացիական նախաձեռնութիւնը կարծում է՝ Սահմանադրական փոփոխութիւններին դէմ ձեւաւորուած «Ո՛չ»-ի ճակատը յաջողութեան չի հասնի անհրաժեշտ քաղաքական ծրագրի բացակայութեան պատճառով:

NEWS.am-ի հետ զրոյցում «Ոտքի՛ Հայաստան» շարժման առաջնորդներից Անդրիաս Ղուկասեանը նշեց, որ հենց այդ պատճառով են իրենք ձեռնպահ մնացել «Ո՛չ»-ի ճակատին միանալուց, չնայած որ վերջինները կարեւոր քարոզչութիւն են իրականացնում:

«Ոտքի՛ Հայաստան» շարժումն ի սկզբանէ այդ ծրագրի մէջ չի տեսել յաջողութեան անհրաժեշտ նախադրեալներ: Մեր կարծիքով՝ չկայ որեւէ նախադրեալ, որ մեր երկրում քուէարկութիւնը կարող է ազնիւ անցնել: Մենք փորձում ենք ամէն կերպ աջակցել նրանց, սակայն նրանք բաւարար գործողութիւններ չեն անում եւ լուրջ քաղաքական ծրագիր չունեն մեր երկրում էական փոփոխութիւններ իրականացնելու համար», - ասաց Անդրիաս Ղուկասեանը՝ պարզաբանելով, թէ ինչու շարժման առաջնորդները Հոկտեմբերի 2-ին ներկայ չէին Երեւանում «Ո՛չ»-ի ճակատի առաջին հանրահաւաքին եւ երթին:

Այնուամենայնիւ, Անդրիաս Ղուկասեանը նշեց, որ «Ոտքի՛ Հայաստան» շարժման հանրային խորհրդի անդամները եւ մասնակիցները ներկայ են եղել եւ հանրահաւաքին, եւ երթին:

«Ոտքի՛ Հայաստան» շարժումը փոխարէնը միացել է «Հանրային Փրկութեան» ճակատին, որը որդեգրել է քաղաքացիական անհնազանդութիւնների միջոցով իշխանափոխութիւն իրականացնելու



«Ոտքի՛ Հայաստան» շարժման առաջնորդներէն Անդրիաս Ղուկասեան

քաղաքականութիւն: «Հանրային Փրկութեան» ճակատն իր առջեւ դրել է աւելի հանրօգուտ քաղաքական նպատակ, այն է՝ հասնել իշխանափոխութեան, եւ այդ կերպ կասեցնել նոր սահմանադրութեան ընդունման ծրագիրը, ինչպէս նաեւ անհրաժեշտ պայմաններ ստեղծել մեր երկրում լեզիտիմ իշխանութիւն ձեւաւորելու համար», - ասաց Ղուկասեանը:

Նշենք, որ Հոկտեմբերի 2-ին, Երեւանի Ազատութեան հրապարակում տեղի ունեցաւ Սահմանադրական փոփոխութիւնների դէմ հանդէս եկող քաղաքական եւ հասարակական ուժերից ձեւաւորուած «Ո՛չ»-ի ճակատի առաջին հանրահաւաքը, ապա բողոքի երթը: «Ձէք Անցկացնի»-ին միացած քաղաքական ուժերի առաջնորդները հիմնականում Ազատութեան հրապարակում չէին. ՀԺԿ-ից ներկայ էր Ստեփան Դեմիրճեանը, ՀԱԿ-ից՝ խմբակցութեան պատգամաւորներ Արամ Մանուկեանն ու Գագիկ Ջահանգիրեանը, իսկ «Ժառանգութիւնից»՝ կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:

Հայաստանում Գործազրկութիւնը Այս Տարի Աճել է 13 Տոկոսով

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ» «Այս տարի Հայաստանում գործազրկութեան մօտ 13 տոկոսի աճ կայ՝ ըստ պաշտօնական տուեալների: 2015 թուականի առաջին ութ ամիսների դրութեամբ Հայաստանում պաշտօնապէս գործազուրկ է 74 հազար մարդ անցած տարուայ նոյն ժամանակահատուածի 65 հազարի փոխարէն:

պնդում են, որ իրականում միայն իրենց քաղաքում այդքան գործազուրկ կը լինի:

«Չաւոյները փակել են, երկու հատ էլ կայ, իրենց սեփականն է, հինգ օր աշխատացնում են, ասում են՝ չորս օր տուել մնացէք: Էս ամենաաղքատ քաղաքն է: Էն ժամանակ առաջին տեղն էր, հիմա ամենավերջին»:

Չարենցաւանցիները չեն յիշում, թէ երբ են վերջին անգամ բարձրաստիճան պաշտօնեայի տեսել իրենց քաղաքում: Աւելի շուտ Մարտի մէկը այստեղ կը գայ, քան Հայաստանի կառավարութիւնից, հեզում են նրանք:

«Ես երկու երեխայ ունեմ, մէկը Ֆրանսիայում է, մէկն էլ ստեղ, աշխատանք չունի: Էն երեխան է մի քիչ մեզ պահում, թէ չէ աղբամանների մէջ ման կը գայինք»:

Այստեղ ոչ միայն թոշակաւուներն են ապրում արտասահմանում բնակուող հարազատների օգնութեան հաշուին, այլ նաեւ երիտասարդները: 25-ամեայ Գոհար Յունանեանը Չարենցաւանի պաշտօնապէս չգործողութեամբ գործազուրկներից մէկն է:

«Տանն եմ մայրիկիս հետ, տնային գործերով եմ զբաղում, ուրիշ ոչ մի բան: Կը ցանկանայի հազուադէպ կամ կօշիկի խանութներում աշխատել», - ասում է նա:

Ֆինանսական վերլուծաբանների խօսքով, սակայն, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութեան այս տուեալները իրականում չեն արտացոլում գործազրկութեան պատկերը: Վերլուծաբան Հայկ Գէորգեանն ասում է՝ աշխատանք փնտրողներն առնուազն կրկնակի են:

«Իրականում, ըստ փորձագիտական գնահատականների, Հայաստանում գործազուրկ է աւելի քան 140-150 հազար մարդ: Գործազրկութիւնը կարող է հասնել մինչեւ 26-27 տոկոսի», - նշեց Գէորգեանը:

Պաշտօնապէս գործողութեամբ գործազուրկների թուով Հայաստանի մարզերից առաջին տեղում Շիրակն է, երկրորդում՝ Լոռին, երրորդում՝ Երեւանի հարեւանութեամբ գտնուող Կոտայքի մարզն է: Այստեղ պաշտօնապէս գործազուրկ է 7000 մարդ: Չարենցաւան քաղաքի բնակիչները մինչդեռ

ԼՈՒՐԵՐ

Վերլուծաբանը Անհրաժեշտ Ու Կարելոր է Գնահատում Սերժ Սարգսեանի Այցն ԱՄՆ



Սերժ Սարգսեան Պարաբե Միշել Օպամայի հետ՝ Նիւ Եորքի մէջ Ամերիկայի առաջին գոյգի հրաւիրած ընդունելութեան ընթացքին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի այցը Միացեալ Նահանգներ անհրաժեշտ էր յատկապէս վերջին երկու տարուայ այն քաղաքականութեան ֆոնին, որ տեղ Հայաստանը պարբերաբար հանդէս էր գալիս գրեթէ ռուսական շահերի կցորդի դերում: Այդ մասին ասաց քաղաքական վերլուծաբան Յակոբ Բաղալեանը «Կիրակնօրեայ վերլուծական Թամ-րազեանի հետ» ծրագրի ժամանակ՝ ընդգծելով, որ, այդ առումով, Սերժ Սարգսեանի՝ Միացեալ Նահանգներ այցը նաեւ ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի բացակայութեան պայմաններում շատ կարեւոր էր:

Քաղաքագէտը յատկապէս առանձնացրեց Հայաստանի նախագահի ելոյթը Միացեալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի նախաձեռնած խաղաղապահութեան գագաթնաժողովին:

Յիշեցնենք, Սարգսեանը իր այդ ելոյթում յատուկ շնորհակալութիւն յայտնեց ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ի անդամ այլ երկրներին ու կառույցներին՝ Հայաստանի խաղաղապահ կարողութիւնների ստեղծման եւ զարգացման գործում առանցքային դերակատարութեան համար: Նախագահը նշեց, որ Հայաստանն այսօր արդէն միջազգային խաղաղապահութեան եւ անվտանգութեան ակտիւ ներդրող է հանդիսանում՝ կուտակելով զգալի փորձ անցած տասնամեակի ընթացքում: «Միջազգային խաղաղութեան ու անվտանգութեան պահպանումը բոլորի՝ թէ՛ մեծ, թէ՛ փոքր պետութիւնների առաջնային պատասխանատուութիւն է, իսկ խաղաղապահութիւնը՝ այդ նպատակին հասնելու գլխաւոր միջոցներից մէկը: Այսօր մեզ դեռեւս հարկաւոր են լրացուցիչ հաւաքական ջանքեր՝ այն առաւել ամրապնդելու համար: Ակնյայտ է, որ միայն համապարփակ, համադրուած ու կշռադատուած մօտեցմամբ է հնարաւոր ունենալ խաղաղ եւ ապահով աշխարհ», - ասաց Սերժ Սարգսեանը:

Յակոբ Բաղալեանի խօսքով՝ նախագահը փաստացի վերահաստատեց Հայաստանի մասնակցու-

թիւնը միջազգային անվտանգութեան համակարգի խաղաղապահ առաքելութիւններին, ՆԱՏՕ-ի եւ Միացեալ Նահանգների դերը Հայաստանի խաղաղապահ բրիգադի կազմաւորման եւ գործունէութեան հարցում:

Մինչեւ Միացեալ Նահանգներ մեկնելը, Սերժ Սարգսեանը Հայաստանում՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի 6-րդ նիստի օրակարգի հարցերի քննարկման ժամանակ, անդրադառնալով ատրպէյճանի կողմից հրադադարի խախտման դէպքերին, յայտարարել էր. - «Երբ մենք ասում ենք, որ պատերազմից վախենում ենք, բայց կրուելուց չենք վախենում, դատարկ խօսքեր չեն: Հայաստանը, իսկ երբ ես ասում եմ Հայաստանը՝ Լեւոնային Ղարաբաղը նրա անբաժան մասն է, երկրագնդի ամենաազմականացուած տարածքներից են»:

Դիտարկմանը, թէ այս նախադասութեան մէջ տեսնում ենք, որ ակնյայտօրէն Հայաստանի առաջին դէմքը Ղարաբաղը ճանաչում է իբրեւ Հայաստանի մաս, եւ հարցին, թէ ի՞նչ է սա նշանակում, յատկապէս որ այսպիսի յայտարարութիւնից յետոյ զարմանալիօրէն միջազգային որեւէ ատենից որեւէ քննադատութիւն Սերժ Սարգսեանի հասցէին չհնչեց, քաղաքական վերլուծաբանը պատասխանեց. - «Շատ դժուար է ասել՝ եթէ, օրինակ, այդպիսի յայտարարութիւն հնչէր, ասենք, ՄԱԿ-ի ամբիոնից, որեւէ միջազգային ամպիոնից, ինչպիսին կը լինէր միջազգային հանրութեան արձագանգն այդ դէպքում, ասենք՝ նոյն Միւսկի խմբի: Հակուած եմ կարծել, որ առաւելապէս այդ յայտարարութիւնն ընկալուել է իբրեւ Հայաստանի ներսում հոգեբանական ազդեցութեան, եւ համաձայն եմ, որ նաեւ աւելի շատ ատրպէյճանին մետիջ էր, ատրպէյճանին ուղղուած յայտարարութիւն էր, եւ այդ պատճառով, կարծում եմ, միջազգային հանրութիւնը եւ Միւսկի խումբը որոշակի չէզոքութիւն պահեց այդ յայտարարութեան հանդէպ»:

Սահմանային Իրավիճակը Շարունակում Է Մնալ Կայուն Լարուած

Հայ-ատրպէյճանական սահմանին եւ շփման գծում իրավիճակն, ըստ պաշտպանութեան նախարար Սերեան Օհանեանի, շարունակում է մնալ կայուն լարուած, սակայն հայկական ուժերի պատժիչ գործողութիւններից յետոյ հակառակորդն այլեւս ծանր հրետանի չի կիրառում:

«Եթէ այս գիշերը համեմատում ենք միւս օրերի հետ, մի քիչ աւելի հանգիստ է եղել, խոշոր տրամաչափի զէնքերից եւ ականաներից չեն կրակել: Իրավիճակը մեր գործերի կողմից վերահսկուած է, մեր ժողովուրդը կարող է հանգիստ լինել, որ հայ զինուորը առաջին գծում իր պարտականութիւնները կատարում է պատշաճ մակարդակով», - ասաց նախարարը:

Սերեան Օհանեանը սահմանային լարուածութեան եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործում դրական է գնահատում նաեւ Հայաստանի դիւանագիտական աշխատանքը. նախարարի կարծիքով՝ այն համարժէք է ռազմական գործողութիւններին:

Գերմանացի Պատգամաւորը՝ Բունդեսպագում Ցեղասպանութեան Հարցի Ցետաձգման Մասին

Հայոց ցեղասպանութեան մասին հարցը գերմանական Բունդեսպագում շրջանառութեան մէջ պէտք է դրուէր Օգոստոսին, սակայն դա յետաձգուել է օբիեկտիւ պատճառներով:

«Յայտնի է, որ Յունաստանի ճգնաժամի հետ կապուած քննարկումներ էին ընթանում Բունդեսպագում, որից յետոյ ի յայտ եկաւ փախստականների հարցը եւ Հայոց ցեղասպանութեան հարցը կարծես թէ ընկաւ յետին պլան», - ասում է Բունդեսպագի պատգամաւոր Ալբերտ Վայլերը:

«Յայտնի է, որ Յունաստանի ճգնաժամի հետ կապուած քննարկումներ էին ընթանում Բունդեսպագում, որից յետոյ ի յայտ եկաւ փախստականների հարցը եւ Հայոց ցեղասպ Ալբերտ Վայլերը:

Քրիստոնեայ-դեմոկրատական կուսակցութեան պատգամաւոր Ալբերտ Վայլերը հիմնադրել եւ ղեկավարում է գերմանահայկական ֆորումը: Ըստ նրա՝ չնայած Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը յապաղում է, այնուամենայնիւ՝ իրենք աշխատում են ակտիւօրէն:

«Մենք պատրաստուում ենք նամակ ուղղել Բունդեսպագի նախագահ պարոն դոկտոր պրոֆեսոր Նորբերտ Լամբերտին՝ կոչ անելով՝ հայցադիմումը շրջանառութեան մէջ դնել, քանի որ հենց պարոն Լամբերտն էլ իր ունեցած ելոյթով Բունդեսպագին կոչ արեց ընդունել Ցեղասպանութիւնը: Այս թեման նաեւ այսօր Սիբիայում քրիստոնեաների նկատմամբ տեղի

«Դրանք կատարում են համահունչ, իրար հետ փոխկապակցուած, իրար հետ համաձայնեցուած, եւ այս երկար տարիների աշխատանքի շնորհիւ է, որ մենք թէկուզ եւ չարաբերական, բայց կարողանում ենք խաղաղ պայմաններն ապահովել»:

Հոկտեմբեր 5-ի Կառավարութեան ընդունելութիւնների տանը մեկնարկած «Խաղաղութեան պրոբլեմներ» միջազգային ամենամեայ համաժողովի իր բացման խօսքում, դիմելով 16 պետութիւնների շուրջ վեց տասնեակ ներկայացուցիչներին, նախարարն ընդգծեց՝ իւրաքանչիւր տարածաշրջանի ապակայունութիւնն իր հետեւանքն է թողնում եւ նոր մարտահրաւիրներ է առաջ քաշում ամբողջ աշխարհի համար:

«Այսպիսի իրավիճակում խաղաղութեան եւ կայունութեան սպառնալիքների բաժանումն ըստ տարածաշրջանների խիստ պայմանական է, ուստի տարածաշրջանային հիմնախնդիրները ստանում են միջազգային կայունութիւն», - ընդգծեց նա:



Գերմանիայի Խոտերգարանի անդամ Ալբերտ Վայլեր

ունեցողի համապատկերում արդիական է», - ասում է նա:

Իսկ ինչպիսի՞ն է Գերմանիայի պաշտօնական դիրքորոշումը՝ Լեւոնային Ղարաբաղի խնդրի լուծման հնարաւոր տարբերակների շուրջ: Այս թեմայով պարոն Վայլերն անձամբ է գրուցել արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ:

«Կարող եմ ասել, որ այս պահին գերմանական արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնների օրակարգը աշխարհագրական այլ մասեր է ընդգրկում: Սակայն Գերմանիայի շահերից է բխում, որ Հայաստանի ու ատրպէյճանի միջեւ հակամարտութիւնը խաղաղ կարգաւորուի:

Ալբերտ Վայլերը Երեւանի պետական համալսարանում էր «Գերմանական պառլամենտարիզմը» խորագրով միջոցառմանը մասնակցելու նպատակով:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆԴՈՒՅՆԵԼ (626) 797-7680

ՀԱԼԵՊ ԱՌԵԻԱՆԳՈՒԱԾ ԵՒ ԱԶԱՏՈՒԱԾ ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԶԱՓԱՐԵԱՆՆԵՐԸ ԵՐԵԻԱՆ ԿԸ ՀԱՍՆԻՆ



Հայկա-Պէջրութ ճանապարհին առեւանգուած երկու հայորդիները Երեւան ժամանած են: Այս մասին տեղեկութիւնը փոխանցեց ազատ արձակուած մեր հայրենակիցներուն պարագաներէն մին: Մեր աղբիւրը նաեւ ըսաւ, որ հայր ու որդի Գէորգ եւ Ճորճ-Սարգիս Չափարեաններ «Զուարթնոց» օդակայան հասած են: Ճորճ Չափարեան, իր հարազատները տեսնելով բացազանչած է՝ «հողը համբուրեմ

հայրենիք»:
Նշենք, որ Հայկա, Պէջրութի, Դամասկոսի եւ Երեւանի տարբեր մակարդակներու ազգայիններ կարեւոր ճիգեր ըրած են անոնց ազատութեան համար: Չափարեանները առեւանգուած էին անցնող 19 Սեպտեմբերին, երբ Հայկա-Պէջրութ կը փորձէին գալ, հոնկէ Երեւան փոխադրուելու համար:

«Արեւելք»

ՈւՔՔԱՅԻ ՎԵՐԵՁԻՆ ՀԱՅԵՐԸ ՀԵՌԱՑԱԾ ԵՆ ԴԵՊԻ ՀԱԼԵՊ ԵՒ ԼԱԹԱՔԻԱ

«Արեւելք»-ի տիրապետած տեղեկութիւններով Ռաքթա բնակող վերջին հայերը հեռացած են շրջանէն: 30 Սեպտեմբերէն սկսեալ Ռաքթայի մէջ իրավիճակը կտրուկ կերպով ծանրացած է, որուն հետեւանքով մեր հայրենակիցները (5-6 հայ ընտանիքներ) ստորալուած եղած են հեռանալ դէպի Հայկա եւ Լաթաքիա:

միջ-քաղաքային հեռախօսի կապը եւ համացանցային կապը ընդհանրապէս կտրուած է: Ռուսական կործանիչներ ծանրօրէն կը հարուածեն ISIS-ի գլխաւոր կեդրոնատեղիները եւ քաղաքին մէջ տագնապալի իրավիճակ կը տիրէ: Նոյն առումով կը հարողուի նաեւ, որ մեր հայրենակիցներու բնակարանները գրաւուած են ISIS-ի ահաբեկիչներուն կողմէ: Զինեալները խոյս տալու համար կործանիչներու հարուածներէն դատարկ բնակարաններ կը գրաւեն եւ այդ բնակարանները որպէս թաքստոց կ'օգտագործեն:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԱՆԱՉԱԾ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂԻՆ ԾԵԾՈՂՆԵՐԸ ԴԱԲՈՒԹՕՂՈՒԻ ԿՈՒՍԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ ԵՂԱԾ

Թուրքիայի «Արդարութիւն եւ զարգացում» (AKP) կուսակցութեան մամուլի խօսնակ Օմեր Չելիքը յայտնած է, որ Hürriyet-ի լրագրող եւ CNNturk-ի հաղորդավար Ահմեդ Հաքանին ծեծողներէն 3-ը եղած են իրենց կուսակցութենէն, կը տեղեկացնէ NEWS.am-ը՝ թրքական Sozcu պարբերականին յղումով: «Այս ամէնը յայտնի դառնալէ յետոյ որոշում կայացուած է՝ յիշեալ 3 անձերուն հեռացնել կուսակցութենէն», - ըսած է Օմեր Չելիքը:



Սեպտեմբերի 30-ին՝ հերթական հաղորդման աւարտէն յետոյ, Ահմեդ Հաքանը ուշ երեկոյեան տուն գացած է, որու ժամանակ անոր մեքենային ետեւէն թոյլ հարուածած է սեւ մեքենայ մը: Այնուհետեւ մեքենայի մէջ գտնուողները առանց որեւէ բառասելու՝ իջած են եւ ծեծած են Ահմեդ Հաքանին եւ անոր թիկնապահին: Աւելի ուշ յայտնի դարձած է, որ յարձակում իրականացուցած 4 անձն ալ ձերբակալուած են: Ոստիկանները կ'ուսումնասիրեն յարձակում իրականացողները կապը հնարաւոր պատուիրատուներու հետ, քանի որ վերջին շրջանին Ահմեդ Հաքանը լարուած բանավէճերի մէջ եղած է իշխանութիւններու ներկայացուցիչներու հետ:

Սեպտեմբերի 30-ին՝ հերթական հաղորդման աւարտէն յետոյ, Ահմեդ Հաքանը ուշ երեկոյեան տուն գացած է, որու ժամանակ անոր մեքենային ետեւէն թոյլ հարուածած է սեւ մեքենայ մը: Այնուհետեւ մեքենայի մէջ գտնուողները առանց որեւէ բառասելու՝ իջած են եւ ծեծած են Ահմեդ Հաքանին եւ անոր թիկնապահին: Աւելի ուշ յայտնի դարձած է, որ յարձակում իրականացուցած 4 անձն ալ ձերբակալուած են: Ոստիկանները կ'ուսումնասիրեն յարձակում իրականացողները կապը հնարաւոր պատուիրատուներու հետ, քանի որ վերջին շրջանին Ահմեդ Հաքանը լարուած բանավէճերի մէջ եղած է իշխանութիւններու ներկայացուցիչներու հետ:

ԿԱՐՕ ՓԱՅԼԱՆԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՈՒԵԼԻՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ



Թուրքիայի մէջ յառաջիկայ ընտրութիւններուն քրտական «Ժողովուրդներու դեմոկրատական» (HDP) կուսակցութիւնը կեդրոնական ընտրական յանձնաժողով ներկայացրած է կուսակցութեան պատգամաւորներու թեկնածուներու ցանկը: Քրտական կուսակցութիւնը Ստամպուլէն կրկին պատգամաւորի թեկնածու առաջադրած է հայ գործիչ Կարօ (Կարապետ) Փայլանին: Կարօ Փայլանը առաջադրուած է անցողիկ տեղում: Նշենք, որ 2015-ի Յունիսի 7-ի ընտրութիւններուն պատգամաւոր դարձած է եւ արդէն հասցուցած է հայ համայնքի եւ քրտական հարցի կարգաւորման մէջ կարեւոր քայլեր իրականացնել:

Թուրքիայի մէջ տեղի պիտի ունենան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ:

Յունիսի թուրքիայի խորհրդարանական ընտրութիւններուն տարբեր կուսակցութիւններու կողմէ առաջադրուած հինգ հայ թեկնածուներէն երեքը յաղթեցին անցողիկ շէմը: Ի դէպ, Թուրքիայի խորհրդարանին մէջ 1960 թուականէն ի վեր հայ պատգամաւորներ չէին եղած: Քրտամէտ «Ժողովուրդներու Դեմոկրատական» կուսակցութեան (ԺԴԿ) կողմէ առաջադրուած Կարօ Փայլանը ընտրութիւններէն յետոյ յայտարարեց, որ ժխտողական քաղաքականութեան դէմ պայքարողներէն մէկն պիտի ըլլայ:

Յիշեցնենք, որ Թուրքիայի նախագահն ըսած է, որ ընտրութիւններու ընթացքին առաջին տեղը զբաղեցրած է «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան նախագահ, վարչապետ Ահմեդ Դաւութօղլուին այդպէս ալ չյաջողուցեալ կառավարութիւն ձեւաւորել:

Ան ըսաւ, որ շարք մը խնդիրներ կան, որոնց միասին պէտք է անընդհատ բարձրաձայնուի, բայց կարեւոր կիզակէտը կը գտնուի Յեղասպանութեան խնդիրը: Կարօ Փայլանը ըսած է, որ ունինք, մշակութային մեծ կորուստ, որ առ այսօր փոխհատուցուած չէ: Պատգամաւորը սակայն կը նշէ, որ բոլոր խնդիրներու լուծման համար հայերը միայնակ պայքարելով չեն կրնար յաջողութեան հասնիլ:

Իսկ ընդդիմադիր ժողովրդաշահարպետական կուսակցութեան առաջնորդին նոյն լիազօրութիւններու յանձնումը ժամանակի կորուստ է, հետեւաբար, ըստ Սահմանադրութեան, իր որոշմամբ նոր խորհրդարանական ընտրութիւններ պիտի կատարուին: Նկատէք, որ քրտական «Ժողովուրդներու Դեմոկրատական» (HDP) կուսակցութիւնը կեդրոնական ընտրական յանձնաժողով ներկայացուցած է կուսակցութեան պատգամաւորներու թեկնածուներու ցանկը եւ Կարօ Փայլանը առաջադրուած է:

«Մեր կուսակցութեան սկզբունքներէն է, որ այս խնդիրներու համար պայքարինք այլ ազգերու հետ միասնաբար: Բայց, բնականաբար, ես անձնապէս իմ պայքարս կը տանիմ»: Ռատիօլուրի հետ զրոյցի ընթացքին հայ պատգամաւորը վերապահումով մտտեցած է այն մտքին, որ Թուրքիայի խորհրդարանին մէջ յայտնուած հայ պատգամաւորները կարող են գործել միասին, քանի որ անոնք հակադիր քաղաքական դաշտերէն են:

Հաշուել առնուած է այն հանգամանքը, որ պատգամաւորը արդէն հասցրած էր հայ համայնքի եւ քրտական հարցի կարգաւորման մէջ կարեւոր քայլեր իրականացնել: Գարօ Փայլանը Ռատիօլուրի հետ զրոյցի ընթացքին նշած է, որ Նոյեմբերի ընտրութիւններու ելքը չի կրնար կանխատեսել, քանի որ այս երկու ամիսներու ընթացքին քաղաքական պրոցեսները այլ զարգացում ստացած են:

Արդեօք հայ ազգի գործիչը կը կարողանայ կեանքի կոչել իր զաղափարները դեռեւս պարզ չէ, քանի որ Նոյեմբերի մէկին

«Այն ընտրութիւններու ժամանակ քաղաքական իրավիճակը այսքան լարուած չէր: Մենք պէտք է ամէն ինչ ընենք, որ իրավիճակը շտկուի՝ բախումները դադարին ու դեմոկրատական գործընթացներ սկսուին, այլապէս այլ սցենարներ կրնան զարգանալ»:

Հայաստանի Ազգային Ժողովը

Շարունակուած է 1-էն
դիրներէն Ազգային Ժողովի որոշման դէմ էր միայն Հրանդ Բագրատեանը: Այլ քսանոր Արգումանեանը, Լուդմիլա Սարգսեանը կողմ էին, Խաչատուր Քոքոբեյեանը՝ չմասնակցեցաւ քուէարկութեան:
Հանրապետական խմբակցութեան քարտուղար Գագիկ Մելիքեանի կարծիքով տակաւին այլ ընդդիմադիրներ կու գան միանալու «այո»-ի շարքերը: «Քարոզչութեան ընթացքում մեզ կը յաջողուի բաւականին մեծ թիւով ընդդիմադիր գործիչներ իւր հանրութեան շրջանում նաեւ մեծաքանակ մարդկանց համոզել, որ այս ճանապարհը ճիշդ է», ըսաւ ան:

«Ոչ»-ի ճակատի անդամ Արամ Մանուկեանի խօսքերով, «այսօրու անից սկսելու է աշխատել հասարակութեան հետ»:
«Ժողովուրդը ոգեւորուած չէ Սերժ Սարգսեանի շարունակութիւնը տեսնելու, այնպէս որ, հանրաքուէի օրը եթէ դուրսի, հանգիստ կարելի է դարձնել Սերժ Սարգսեանի անվստահութեան քուէարկութեան օր», - ըսաւ Մանուկեանը:
Հայաստանի կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչեան յայտարարեց, որ Սահմանադրական փոփոխութիւնները կրնան հանրաքուէի դրուիլ ամենատուր Դեկտեմբեր 30-ին իսկ ամենասկսնական իւր՝ Նոյեմբեր 30-ին:

ՃԵՅՄԱ ՔՐՈՍՏՈՒԷԼԸ ԵՒ ԺԱՆ ՌԵՆՈՆ ԿԸՆԿԱՐԱՅԱՆՈՒԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ «ԽՈՍՏՈՒՄ» ՖԻԼՄԻՆ ՄԷՋ



Ճէյմս Քրոմուէլը եւ Ժան Ռենոն Քրիստիան Բէյլի հետ միասին կը նկարահանուին Հայոց ցեղասպանութեան մասին «Խոստում» (The Promise) ֆիլմի մէջ, Variety-ին յղումով կը յայտնէ PAN ARMENIAN.Net-ը:

Պատմական ժապաւէնը կը նկարահանէ ռեժիսոր եւ սցենարիստ Թերի ճորճը Ռոբին Սվիքորդի հետ համատեղ գրած սցենարով: Ֆիլմի հիմքը սիրային պատմութիւն է, որ կը ծաւալուի 1922 թ. Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն: Գլխաւոր հերոսներն են բժշկականի ուսանողը, որը կը խաղայ Օսկար Ալզեկը, Փարիզի մէջ աշխատող ամերիկացի լրագրողը՝ Քրիստիան Բէյլի դերակատարումով եւ նրբագեղ կին մը Շառլոթ լը Բոնի դերակատարումով, կը յայտնէ Sputnikarmenia-ն:

Ճէյմս Քրոմուէլն պատասխան կը մարմնաւորէ ԱՄՆ դեսպանը, որ հերոս կը դառնայ, իսկ Ռենոն՝ ֆրանսացի ծովակալը: Նկարահանումները սկսած են Սպանիայի եւ Փորթուկալիայի մէջ եւ կը կը շարունակին մինչեւ Դեկտեմբեր:

Ֆիլմը ամերիկացի լեգենդար գործարար, միլիարտատէր եւ բարերար Քըրք Քրքորեանի վերջին մտայնացումն էր: Ան մահացաւ Յունիս 16-ին 98 տարեկանին: Քրքորեանը մահէն առաջ հոգացած է, որ Հայոց ցեղասպանութեան մասին իր

կինոնախագիծը նկարահանուի:

Ֆիլմը կը նկարահանէ Survival Pictures կինոընկերութիւնը, որ կը ղեկավարեն էրիկ Էսրաիլեանը եւ Էնթոնի Մանդեկիչը: Քրքորեանի Tracinda Corporation-ը կը ֆինանսաւորէ կինոընկերութեանը ինչպէս այս, այնպէս էլ միւս կինոնախագիծերի ղէպքերուն: Քըրքորեանի իրաւաբան Պատրիշա Գլէյզերը պատմած է, որ Survival Pictures-ը ծնած է գործարարի անհազ ցանկութենէն՝ պատմած ու ներկայացուցած է ոգեշնչող մարդկային պատմութիւններ ամբողջ աշխարհի հանդիսատեսին: Ան ըսած է նաեւ, որ Քըրքորեանը շատոնց կ'երագէր անձամբ մասնակցիլ ֆիլմի ստեղծման եւ դերասանական կազմի ընտրութեան աշխատանքներուն:

Գլէյզերի բնորոշումով՝ «Խոստումը» պիտի ըլլայ հոյակապ սիրային պատմութիւն, ինչպէս նաեւ՝ առաջամարտիկ՝ մարդու իրաւունքներու ասպարէզին մէջ:


Այս առնչութեամբ Facebook-ի իր էջին մէջ կը հրապարակէ նաեւ աշխարհահռչակ ուրբ երաժիշտ Սերժ Թանկեանը՝ յայտնելով, որ ինքը եւս կը մասնակցի այս նախագիծին: «Անցած քանի մը տարիներուն ես եզակի պատիւ ունեցած եմ օգնելու եւ խորհուրդներ տալու իմ ընկեր Էսրաիլեանին այս խոշոր կինոֆիլմի առիթով», - գրել է Թանկեանը:

ՄՈՆՏԵԻԴԻՈՅԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ Է ՈՒՐՈՒԳՈՒԱՅԻ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒ ՅԵՂԻՆԱԿԱԾ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Մոնտեիդիոյի մէջ Հոկտեմբեր 1-ին տեղի ունեցած է ուրուզուացի պատմաբաններ՝ Մարսէլո Դեսենայի եւ Անդրէս Սեռալտայի «Հայոց ցեղասպանութիւն» գրքի շնորհանդէսը: Այն հետազոտական աշխատութիւն է, որու նպատակն է պայքարիլ 100 տարի առաջ հայերու նկատմամբ թուրքիայի կատարած գործողութիւններու ժխտման դէմ:

«Այս մեծ ներդրում է չիշողութեան համար, քանի որ կանգնած ենք դեռեւս մարդկութեան կողմէ չճանաչուած եւ թուրքիայի կողմէ ժխտուող ցեղասպանութեան ինքի ռաւջ», eldiario.es կայքի տեղեկութիւնով՝ շնորհանդէսի ժամանակ նշած է Ուրուզուացի գրօսաշարութեան նախարար Լիլիամ Քէշիշեանը:

Գիրքի համահեղինակ Դեսենայի խօսքով՝ «Այն տեղե-



կատական աղբիւր է իւրաքանչիւրի համար, ով կը ցանկանայ

ԹՈՒՐԲ ԵՐԳՉՈՒՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԷՆ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԷ



«Իրերն իրենց անուններով պէտք է կոչել. ես կը գիտակցիմ, որ Ռաֆայէլ Լեմբինի ստեղծած եզրույթը շրջանառութեան մէջ մտած է Հայոց ցեղասպանութեան իրագործումէն յետոյ: Ինչպէ՞ս կարելի է խուսափիլ այդ բառն արտասանելէ: Իհարկէ, ես կ'օգտագործեմ այդ բառը: Կ'ամչնամ այն ամէնի համար, ինչ ըրած է իմ ժողովուրդը, եւ ես հայ ժողովուրդէն ներդրութիւն կը խնդրեմ անոր համար», - Հոկտեմբերի 2-ին լրագրողներին հետ հանդիպումին ըսած է գերմանաբնակ թուրք երգչուհի Լեման Շտեհնը, կը տեղեկացնէ «Նովոստի Արմենիա»-ն: «Հայագր մանկութենէն սրտիս խորքին մէջն է, հայ դասընկերներ ունեցած եմ, որոնց միջոցով ծանօթացած եմ հայկական մշակոյթի եւ երգարուեստի հետ», «Առաւօտ»-ի փոխանցումով՝ ըսած է երգչուհին, որ Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տան մէջ անցեալին համերգով հանդէս եկած է «Տաղարան» համույթի հետ:

Շտեհնը ծնած է Ստամպուլի մէջ, մեծցած է Գերմանիոյ մէջ՝ այդտեղ ծանօթացած է Հայկական հարցի հանդէպ հայրենի երկրի դիրքորոշմանը: Պոլիսի մէջ կրթութիւն ստանալու տարիներուն երգչուհին միշտ բախումներու մէջ եղած է թրքական գաղափարախօսութիւն քարոզող դասախօսներու հետ: Այդ ընթացքին իմացած է, որ թուրքիոյ մէջ նախապէս հայեր ապրած են. «Օրինակ՝ Գերմանիայի դպրոցներուն մէջ պատմութիւնը անհառ կը ներկայացնեն, ըսենք՝ Հիթլերին կը դատապարտեն: Ան ըսեր է՝ ով այսօր կը չիշէ հայերու ցեղասպանութեան մասին: Այդ արտայայտութիւնը կը խոցէ մարդու սիրտը», - ըսած է երգչուհին:

Ժամանակին Կոստանդնուպոլիսի մէջ ան շփուած է հայ գործիչներու հետ եւ շատ բան իմացած է Հայաստանի մասին: Յիշելով Հրանտ Տինքին Շտեհնը յուզումներով ըսած է. «Սիրելի եղբօրս՝ Հրանտ Տինքին կորսնցուցինք... Այդ ղէպքէն յետոյ վերադարձայ Գերմանիա եւ սկսայ անոր սիրելի երգը՝ «Սարի աղջիկը» տարբեր բեմերէ երգել

հայերէնով»:

Asekose.am-ի հաղորդումով՝ Լեման Շտեհնը նշած է. «Իւրաքանչիւր անգամ, երբ Երեւան կ'ըլլամ եւ Արարատին կը նայիմ, շատ կը յուզուիմ, քանի որ անոր նայիլը կը չիշեցնէ մարդ ըլլալը ու կը յուշէ, որ ատոր համար պէտք է քայլ կատարես: Ամէն թուրք կարող է հասնիլ այդ լեւան գագաթին, եղնիկները եւս կարող են: Յաւ է, որ հայը իր սարի մօտ չի կարող երթալ»:

Կայքի թղթակիցի հարցին, թէ իր կարծիքով ինչո՞ւ թուրքիան կը շարունակէ չընդունիլ Հայոց ցեղասպանութիւնը, Լեման Շտեհնը պատասխանած է. «Պետութիւնը իր շահերու վրայ հիմնուած կառույց է, ուստի, յանուն շահի թուրքիան կը կեղծէ պատմութիւնը եւ ստիկ ձեռքազատուիլ չի կրնար: Ես բանուորի ընտանիքէ եմ, ու իր քրտինքով աշխատող մարդէն ամէն ինչ խլող իշխանութեան հետ գործ ունինք, իսկ այդ ամենամեծ անարգանքն է մարդու հանդէպ: Իշխանութիւնները հասարակութիւնը կը սնուցանեն կեղծ արժէքներով, ուստի նման պետական միաւորներու ներկայութեամբ պէտք է մեր նման մտածողներու թիւը շատցնենք»:

Թուրքիայի մէջ մտաւորականները ստորագրահաւաք սկսած են, որու նպատակը Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը դասագրքերու մէջ ներառելն է, պէտք է վերացուին բոլոր այն գիրքերը, որտեղ հային մեծագոյն թշնամի կը համարեն», ըսած է երգչուհին:

Լեման Շտեհնը լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ընթերցեց նաեւ թուրքիայի պատմութեան մէջ ամենամեծ երգահանի՝ Ռուհի Սուլի բանաստեղծութիւնը. մարդ, որը 1915 թուականի որբերէն է, եւ չէ իմացած իր հայ լինելը:

2 տարի առաջ եւս թուրք երգչուհին այցելած է Հայաստան, Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ ներողութիւն խնդրած է հայերէն՝ Օսմանեան կայսրութեան կատարած ոճրագործութեան համար:

տեղեկանալ պատմական իրողութեան մասին»: Գիրքին մէջ ներկայացուած են 1915-1923 թթ. շրջանն ընդգրկող տարբեր աղբիւրներէ քաղուած փաստագրական տուեաններ, դիւանագիտական գրութիւններ եւ մամուլոյ հաղորդագրութիւններ:

Դեսենան իր խօսքին մէջ չիշատակած է նաեւ 1915-ի Հոկտեմբերի 1-ին Ուրֆա քաղաքին մէջ հայերու ինքնապաշտպանութեան մասին, որտեղ 23,000 մարդ տեղահանուեցաւ եւ սպանուեցաւ Սուրիայի անապատներուն մէջ:

ԱՄՆ ՆԱԽԿԻՆ ՍԵՆԱՏՈՐԸ ՊՈՊ ՏՈԼԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵԼ Է «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ» ՄՐՑԱՆԱԿՈՎ

Հայոց ցեղասպանութեան եւ հայ գոհերի նկատմամբ հանրութեանն ուշադրութիւնը գրաւելու ջանքերի համար ԱՄՆ նախկին սենատոր Բոբ Դոուլը պարզապէս արժանաւորուել է «Երախտագիտութեան» մրցանակով: Մրցանակը յանձնել է «Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ազգային ոգեկոչում» նախաձեռնութիւնը, որն ստեղծուել է ԱՄՆ-ում Հայ Առաքելական Եկեղեցու արեւելեան եւ արեւմտեան թեմերի եւ առաջնորդարանի համատեղ ջանքերով:



Ամերիկացի քաղաքական գործիչ Բոբ Դոուլը 1969-1996 թուականներին եղել է ԱՄՆ Սենատի անդամ՝ ներկայացնելով Կանզաս նահանգը: Նա երկար տարիներ եղել է հայկական համայնքի բարեկամը: Իսկ 1990 թ. Հայոց ցեղասպանութեան 75-րդ տարելիցին Դոուլը խստորէն կշտամբել է Սենատին, որը հրաժարուել էր Ապրիլի 24-ը հռչակել որպէս Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր:

«Չպէտք է մոռանալ, որ դեռ շատ անելիքներ կան մէկ դար առաջ տեղի ունեցածի միջազգային ճանաչման համար: Միայն ընդունելով եւ ճանաչելով անցեալն աչքի սին, ինչպիսին այն կայ, որքան էլ որ դա ցաւոտ լինի՝ աշխարհը կարող է իսկապէս ապաքինուել եւ ապահովել ցեղասպանութիւններից զերծ ապագայը»,- ինչպէս հաղորդում է «Արմենայրէս»-ը՝ վկայակոչելով ամերիկեան KRSI ռատիոկայանի կայքը, շնորհակալութիւն յայտնելով մրցանակի համար՝ նշել է նախկին սենատորը:

«ՆՈՐ ՕՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 93ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Մեր պաշտօնակից Ռամկավար Ազատական Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի օրկան «Նոր Օր» շաբաթաթերթը, ճաշկերոյթ-խրատական քով մը նշեց իր հիմնադրութեան 93րդ տարեդարձը:

Արդարեւ, Կիրակի, Հոկտեմբերի 4ին, 2015 Signatur Banquet Hall գեղատեսիլ սրահին մէջ տեղի ունեցած սոյն միջոցառումին ներկայ էին քաղաքական, մշակութային եւ գաղութի հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչներ:

«Նոր Օր»-ի ազգանուէր առաքելութեան մասին խօսեցան օրուան հանգիսավար Հրաչ Սեփեթեան, ՌԱԿԻ շրջանային վարչութեան ատենապետ՝ Տօքթ. Ռաֆֆի Պալեանն ու գլխավոր խմբագիր Յակոբ Մարտիրոսեանը:

Մասիկներու հետաքրքրական նկարաշարով մը ցուցադրուեցան «Նոր Օր»-ի 93 տարիներու անցած ուղիէն շահեկան դրուագները:

Օրուան գլխավոր խօսք անուողն էր Հայ Իրաւանց Խորհուրդի անդամ՝ Միհրան Թումաճանը: Ան հանգամանօքէն արտայայտուեցաւ «Հայոց ցեղասպանութեան 100 ամեակը եւ մամուլին ու Երիտասարդութեան դերը այսօր» շահեկան նիւթին շուրջ:

Կրննտէյլ քաղաքի քաղաքապետական Խորհուրդի նախագահ՝ Արա Նաճարեան շնորհաւորել է ետք «Նոր Օր»-ի տարեդարձը, բացատրութիւններ տուաւ Քաղաքապետարանի յառաջիկայ շրջանի գործունէութեան մասին:

Գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը, ուր ելոյթներով հանդէս եկան Դաւիթ Սամուէլեան, Արամ Լեփեճեան, Լենա Թիւֆէնկճեան եւ այլ արուեստագետներ:

«Մասիս» սրտանց կը շնորհաւորէ «Նոր Օր»-ի բարեբախտիկ տարեդարձը, մաղթելով յարատեւութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով, Հայաստանեայց Եկեղեցու Արեւմտեան Թեմի Զուարթնոց Մշակութային Յանձնախումբը կը կազմակերպէ յիշատակի երեկոյ նուիրուած Կոմիտաս Վարդապետին, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, Հոկտեմբեր 27-ին, 2015, երեկոյան 7:30-ին Սրբոց Ղևոնդեանց Մայր Տաճարին մէջ: Օրուան Բանախօսներն են՝ «Կոմիտաս Վարդապետ իբրեւ Երգահան» Երգահան Հենրիկ Անասըանը, «Կոմիտաս Վարդապետին կերպարը իր նամակներուն ընդմէջէն» Հայկ Մատոյեանը:



Գեղարուեստական Բաժնին մէջ իրենց մասնակցութիւնը պիտի բերեն՝ Երգչուհի Անահիտ Ներսիսեանը, Նուագակցութեամբ Երգահանահար Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի, Ասմունքող՝ Նունէ Աւետիսեան, Երգիչ՝ Ռուբէն Թելունց եւ Զուլթակահար՝ Մերուժան:

Մարգարեան: Մուտքը ազատ-Հիւրասիրութիւն:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու եւ իրենց յարգանքի տուրքը մատուցելու Անմահ Կոմիտաս Վարդապետի յիշատակին:

ԿԵԱՆՔԸ Ա. ԵՒ Մ. ՅՈՎԱՏՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Ա. եւ Մ. Յովսէփեան Վարժարանի համայնքը իւրաքանչիւր տարեշրջան ականատես կ'ըլլայ կրթական ուսումնասիրութիւններու վրայ հիմնուած նորարարութիւններու որդեգրման, որոնք կը նախաձեռնուին վարժարանի ժրջան տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին կողմէն: Այս տարեշրջանին սկսած ենք աշխատակցիլ Փաստինայի երաժշտանոցին հետ: Այս համագործակցութեամբ, աշակերտներուն պիտի ջամբուի երաժշտական որակաւոր կրթութիւն հիմնուած երկու հռչակաւոր երոպացի մանկավարժներու՝ Զոլթան Գոտալի եւ Քարլ Օրֆի տեսութիւններուն հիման վրայ:

1984էն ի վեր Յովսէփեան Վարժարանը Փաստինայէն ներս նորարարութիւն եւ յառաջդիմական գաղափարներ հետապնդող ուսումնական հաստատութիւն մը եղած է: Բարի գուգաղիպութեամբ մը եւս, 1984էն ի վեր Փաստինայի երաժշտանոցը հետապնդած է նոյնանման յառաջդիմական մօտեցումներ՝ մանուկներուն մօտ երաժշտութեան հանդէպ սէր եւ արժեւորում զարգացնելու: Առ այդ, մեր եւ իրենց միջեւ գործակցութիւնը անխուսափելի էր: Երաժշտանոցը իրեն իւրաքանչիւր մօտեցումով եւ մեթոտաբանութեամբ, պիտի կիրարկէ նահանգի կողմէ վարկաւորուած

Շաբ.ը էջ 19

www.massispost.com

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԱԲԵՐԱԿ ՔՂԻՆ

Ռազմի Չարաքույուն Յեղասպանութեան թեմայի համատեքստում անդրադարձել է հայկական գաւառին

Յայտնի թուրք իրաւապաշտպան, Հայոց ցեղասպանութեան մասին բազմաթիւ գրքեր հրատարակած Բիլզի հրատարակչատան տնօրէն Ռազմի Չարաքույուն թուրքական Taraf-ում Հայոց ցեղասպանութեան թեմայի համատեքստում անդրադարձել է Արեւմտեան Հայաստանի Քղի (Կեղի, Պատմական Հայաստանի Խորձեան գաւառ) գաւառին: Akunq.net-ի թարգմանութեամբ ներկայացնում ենք Չարաքույունի հրատարակումը:



Virane Kigi / Keghi in Ruins

Քղին Բինգեօլ նահանգի գաւառներէից է: Վերջին ընտրութիւններում ԱԶԿ-ն Բինգեօլից երկու, իսկ ԺԴԿ-ն մէկ պատգամաւոր ունեցաւ: Քղիում ԺԴԿ-ն ստացաւ ձայների 49,2 տոկոսը, իսկ ընտրողները 3755-ն էին: Այո՛, սխալ չընկալեցիք՝ երեք հազար եօթ հարիւր յիսուհինգ: Իսկ 2014 թ. ընտրութիւններում ԺԴԿ-ն ձայների միայն 17 տոկոսն էր հաւաքել, իսկ ԺՀԿ-ն 40 տոկոս քուէով առաջին կուսակցութիւնն էր: Մինչդեռ 2011 թ. ընտրութիւններում 45 տոկոս ձայնով առաջին տեղում ԱԶԿ-ն էր, իսկ վերջին ընտրութիւններում 31 տոկոս քուէ էր հաւաքել:

1915 թ. սկզբներին Քղի գիւղաքաղաքում 3900 հայ եւ մօտ 1000 թուրք/հայ էր ապրում, մինչդեռ գիւղերում հայերի թիւը 37 հազարի էր հասնում: Այն մանուածագործութեան, հողագործութեան եւ անասնապահութեան ոլորտներում բաւականին բարձր արտադրողականութեան շրջան էր:

Այսօր, այնուամենայնիւ, Քղիից դուրս բնակուող քղեցիների թիւը ներկայումս Քղիում բնակուողների թուից, ով գիտէ՞ քանի անգամ է գերազանցում: Ճիշտ էլ բնակչությանը, դերսիմցիների նման: Կարող ենք ասել, որ վերոնշեալը Քղիին էլ է տիրակ:

Քղի անունն առաջին անգամ 1967 թ. լսեցի: Թուրք անունով մի ընկեր ունէի, ով բժշկական ֆակուլտետում էր սովորում եւ թուրք-իսլի բանուորական կուսակցութեան անդամ էր: Յիշում եմ, որ նրա մայրը չափազանց անհանգիստ, թախծոտ կին էր: Միշտ անհանգստանում էր աղջկայ համար, որ նրա գլխին էլ չգար այն, ինչ եղաւ իրենց հետ, քանի որ ձախակողմեան էին: Եթէ աղջիկը մի քիչ ուշանար, ուղղակի խուճապի էր մատնուում:

Թերեւս իրաւացի էր. մեր եւ միւս սերունդների գլխով ինչեր անցան...

Տարիներ շարունակ մտածում էի, թէ թուրքի մօր խոր վշտի տակ ի՞նչ կար արդեօք: Նրա ընտանիքը, ո՞վ գիտի, քանի դժբախտութիւն է ապրել, ինչեր է տեսել 1895-96 թթ., 1915 թ., 1938 թ.

նուիրուած սե-
մինարին:



Սեմինարը
կազմակերպուած
է Հայաստանի
Լսատեսողական
լրագրողներու ընկերակցութիւն
հասարակական կազմակերպութեան
(Association of Audio-Visual Report-
ers) կողմէ:

Սոյն սեմինարը, որ երկրորդն
է իր տեսակին մէջ կը քննարկէ
մարդկային շահագործման (Թրէ-
ֆիքինկ) գոհերու աջակցութեան
վերաբերող խնդիրներ: Սեմինարը
կը շտկանշուի անով, որ անոր
մասնակիցներուն մեծագոյն սոկոսը
լրագրողներ են, որոնք հետամուտ
են աւելիով կատարելագործել իրենց
գիտելիքները եւ թեմային (նիւթին)
մասին հանդէս գալ արհեստավարժ
ու մանաւանդ գոհերուն չվնասող
նիւթերով եւ յօդուածներով:
Սեմինարի ընթացքին ելոյթներով
հանդէս պիտի գան իրաւագիտական,
լրագրողական եւ ապահովական
մարզի գործիչներ եւ փորձա-
գէտներ: Նշենք, որ սեմինարին
բացումը կատարեց Լսատեսողական
լրագրողներու ընկերակցութիւն
հասարակական կազմակերպութեան
(Association of Audio Visual Report-
ers) հիմնադիր- տնօրէն Արզուման
Յարութիւնեան: Ան իր խօսքին
մէջ կարեւորեց սոյն թեմային
առնչութեամբ արհեստավարժ
մօտեցումը եւ շեշտը դրաւ
իրաւական եւ լրագրողական ինչպէս
նաեւ թեմայով զբաղող հասարա-
կական կամակերպութիւններու
միջեւ կապի սերտացման եւ
գործունէութեան դաշտի ծաւալման:

սերուծի գլխաւոր պատճառներէն
մէկը:

Նոյնքան չուսահատական է
վիճակը, երբ կը խօսինք Հայաս-
տանի բնակչութեան տարեցներու
ստուար թիւի մասին: Հոս ալ
արտագաղթը իր քանդիչ դերը կը
խաղայ, եւ երբեմնի երիտասարդ
Հայաստանը, այսօր նոր մտահո-
գութիւններու առջեւ կը դնէ մեզ
ազգովին: Խորհրդային տարիներ-
ուն՝ Հայաստանի բնակչութեան
միջին տարիքը եղած է 22, այսօր
սակայն բնակչութեան միջին տա-
րիքը 33 է, եւ այս ընթացքով կը
կարծուի թէ 2050 թուականին
բնակչութեան միջին տարիքը պի-
տի ըլլայ 43: Ահաւասիկ այս
պատկերը ո՛չ միայն մեզ կը մտա-
հոգէ, այլ նաեւ կը ստեղծէ տնտե-
սական տագնապներ: Օրինակի հա-
մար, եթէ 1990 թուականին 11 անձ
պէտք էր աշխատէր 1 թոշակառու
պահելու համար, 2010 թուականին
անհրաժեշտ եղաւ 6 անձ՝ 1 թոշա-
կառու պահելու համար, իսկ 2050
թուականին 1 թոշակառու կարե-
նալ պահելու համար՝ կարիքը պի-
տի զգացուի 1-6 անձի: Կրնա՞ք
երեւակայել թէ ինչ տնտեսական
ողբերգական վիճակ պիտի ստեղծ-
ուի հայրենիքէն ներս: Ահազան-
գային այս վիճակին պատասխա-

Բացման նիստին նոյնպէս խօսքեր
արտասանեցին՝ Ալեքսանդրա
Եոլիկա (Փորձագէտ-լրագրող՝
Լաթվիա), Դաւիթ Թումասեան (ՀՀ
քննչական կոմիտէի քրէակա-
ցութեան վարչութեան աւագ
քննիչ), Ռոպէրթ Գրիգորեան (ՀՀ
Ոստիկանութեան գլխաւոր վար-
չութեան Թրէֆիքինկի դէմ
պայքարի բաժնի պետ), Մարիճա
Համբարձումեան (Հայաստանի մէջ
ԱՄՆ դեսպանատան իրաւապահ
համագործակցութեան բաժնի
աշխատակից) եւ ուրիշներ:
Նախքան առաջին լսումներուն
սկսիլը նոյնպէս խօսք առաւ
Հայաստանի մէջ Միացեալ
Նահանգներու թմրամիջոցներու
դէմ պայքարի եւ իրաւապահ
համագործակցութեան պիւրոյի
ղեկավար՝ ձէք Անտրուսըն, որ
հայերէն հակիրճ ելոյթ մը
ունենալով կարեւորեց նման
սեմինարներու կազմակերպումը:
Պրն. Անտրուսըն մասնաւորապէս ըսաւ.
«Մենք կը յուսանք, որ Հայաս-
տանը ամուր երկիր կը դառնայ
եւ այդ առումով մեծապէս կը
կարեւորենք մամուլի դերն ու
զարգացումը բոլոր ոլորտներուն
մէջ»: Տեղին է նշել, որ սոյն
սեմինարը իրականացուած է
Երեւանի Միացեալ Նահանգներու
դեսպանատան նիւթական աջակ-
ցութեամբ:

նատուութիւնը ո՞վ պիտի ստանձնէ
եթէ ոչ հայրենի պետականութեան
ղեկավարութիւնը:

Մէկդի թողունք մեր ճառերը,
քարոզախօսութիւնները եւ խորհր-
դաժողովները, որոնք լոզունգի
սահմաններէն անդին չեն անցնիր:
Այս ճգնաժամային անմխիթար վի-
ճակէն դուրս գալու համար ձեռ-
նարկենք ու ապահովենք այնպիսի
տնտեսական առինքնող պայման-
ներ, որպէսզի մեր երիտասարդու-
թիւնը, մեր աշխատող չհեռանայ
երկրէն եւ սատարէ երկրի բարգա-
ւաճման եւ բարօրութեան: Որքան
ալ մտահոգ ենք այսօր մեր արտա-
քին քաղաքական մարտահրաւէր-
ներով-շրջափակում եւ արցախեան
հակամարտութիւն - մեր ապագան
մեր երիտասարդներն են, այլեր՝
որոնք պիտի ըլլան հայրենիքի
պաշտպան գինուորները եւ մեր
քոյրերը պիտի ըլլան այդ գի-
նուորները ծնող մայրերը:

Արտագաղթի արհաւիրքը, ներ-
գաղթի բացակայութիւնը, աճումի
(համրանքի) պակասը, տարեցներու
թիւին համեմատական անճշտ մեզ
կ'առաջնորդեն հասնելու ա՛յն եզրա-
կացութեան, որ ազգային գաղափա-
րախօսութեան պակասը մեզ հաս-
ցուցած է այս անմխիթար օրերուն:
Պիտի արթնանա՞նք մեր թմբիւն...:

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ ԵՐԶՐՈՒՄ - ԿԱՐԻՆ

ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒՆԵԱՆ

Երբ էրզրումի մէջ Սանասարեան վարժարանին առջեւ կեցած «պաճանախ»-իս (գենեկալ) Գէորգին, Տիգրանին եւ եղբոր Տօքթ. Պերճ Ղորղորեանին հետ կը խօսէինք, ուշադրութիւնս գրաւեց ճամբուն միւս կողմը գտնուող խանութ մը որուն ապակեփեղկին վրայ կարմիր, կապույտ եւ նարնջի գոյներով խանութին ազդը եւ անունը գրած էր: Տղոց ըսի որ կայ չկայ այդ խանութին տէրը դաշնակցական հայ մարդ մըն է... Գացինք ստուգելու: Ցուցափեղկին միւս կողմը քառասուննոց մարդ մը ենթադրելով որ լաւ յաճախորդներ էինք, ժպիտով մեզի բարեւեց: Թրքերէնով հարցուցի որ հա՞յ է: Կեղծ ժպիտով մը «ոչ» ըսաւ: Հարցուցի որ իր հայրը, կամ մեծ հարցը կամ մեծ մայրը հա՞յ էր, «հայիր» (ոչ) ըսաւ դարձեալ: Բացատրեցի որ խանութին ցուցափեղկին վրայի գոյները Հայաստանի դրօշակին գոյներն են, եւ թէ աւելի քան հարիւր տարի առաջ, այդ դիմացի Սանասարեան դպրոցին մէջ «Դաշնակցական քոմիթեաները» իրենց «մեծ ժողովը» ունեցած են: Մինչ մարդը սառած ժպիտով տակաւին մեզ կը դիտէր, հարցուցի որ հայ կա՞յ այս քաղաքին մէջ: «Պիլմէմ» (չեմ գիտեր) ըսաւ: Բացատրեցի որ այս շրջանները 100 տարի առաջ ամբողջ հայերուն կը պատկանէին, եւ թէ հազարաւոր հայեր պարտադիր իսլամացած էին եւ հոս կ'ապրէին: Ըսի որ եթէ իր «պէիւք պապան» (մեծ հայրդ) ողջ է, թող հարցնէ այս մասին: «Օլուր» (կ'ըլլայ) ըսաւ:

Էրզրում քաղաքը ծովու մակերեսէն 1757 մետր (5766 ոտք) բարձր է: Իր 400,000 բնակչութեամբ ան էրզրում նահանգին ամենամեծ քաղաքն է: Ան 2011-ին Ձմեռնային Միջազգային Դահլիճ կարշաւի հիւրընկալ քաղաքն էր: Դահլիճ կարշաւի մրցումներուն բացումը տեղի ունեցաւ «Քեզգիմ Գարապէթի»-ի անունանկալ մարզահամալիրին մէջ, (Յունուար 27-Փետրուար 6, 2011): Նկատի ունենալով իր պաղ կլիման, էրզրումի շրջակայքը նշանաւոր է իր ձմեռնային մարզախաղերու մարզադաշտերով եւ դահլիճ կարշաւի համար միջազգային մակարդակով պատրաստուած շրջաններով: Առ այդ, բազմաթիւ ձմեռնային մարզաձեւերու միջազգային մրցումներ հոս տեղի կ'ունենան:

Մեր իջեւանած պանդոկը՝ «Polat Renaissance Hotel», 2011-ի դահլիճ կարշաւի միջազգային մրցումներու մարզիկներուն իջեւանած գլխաւոր պանդոկն էր: Բնութեան հրաշալի գեղեցկութեամբ օժտուած լեռնային մը վրայ շինուած շատ հանգստաւէտ վայր մըն էր: Սենեակներուն մէջ տեղաւորուելէ ետք իջնաք ճաշարան: Հակառակ որ պիւֆէն պատրաստ էր, սակայն Ռամազան ըլլալուն, տակաւին չէր բացուած: Մեր սենյակներուն վրայ նստելէ ետք նշմարեցինք որ ճաշարանի միւս հիւրերը գլխաւորաբար երիտասարդներ եւ պատանիներ էին, հաւանաբար 8-էն 25 տարեկան տղաք, քանի մը աւելի տարեց մարդոց ընկերակցութեամբ: Սպասաւորներէն իմացանք որ ֆուլթայլի ակումբի մը խումբերու մարզիկներն են, որոնք

էրզրում կը գտնուէին մրցաշարքի մը մասնակցելու համար: Այդ պատանիներուն եւ երիտասարդներուն հանդարտ եւ յարաբերաբար լուռ նստուած քը, մաքուր եւ կոկիկ հագուած քը, իրարու հետ քաղաքավար, մեղմ ձայնով խօսակցուցին: Երբ Ռամազանի աւարտի ժամը եկաւ, պատասխանատու անձ մը շատ մեղմութեամբ ընթրիքի հրաւիրեց մարզիկները: Պիւֆէի սեղաններուն վրայ հաւանաբար քառասուն տարեք տեսակի համադամ ճաշատեսակներ կային, անուշաբոյր եւ շատ գեղեցիկ կերպով հրամցուած: Ռամազանի աւարտով աւելի քան երեսուն տեսակ շաքարեղէններ եւ անուշեղէններ ծաղկամաններու շուրջ դասաւորուած էին: Պէտք էր տեսնել այդ տղոց կանոնաւոր շարքը, զիրար հրաւիրելը, աչքը կուշտ պնակներուն մէջ ճաշերը լեցնելը: Պատիկներու պարագային մեծերը կ'օգնէին տղոց ճաշերը լեցնելու: (Օր մը պիտի գրեմ թէ ինչպէ՞ս կարգ մը հայեր պիւֆէներէն կ'օգտուին... արդէն հասկցաք):

Էրզրումը մեր պատմական Կարին քաղաքն է, հիմնուած հայոց Կարանի թագաւորին կողմէ: Ան Արտաշէսեան եւ Արշակունեաց թագաւորութեանց ժամանակ Մեծ Հայքի կամ Բարձր Հայքի Կարին նահանգին մայրաքաղաքն էր: 387 թուականին երբ Հայաստանը բաժնուեցաւ արեւելեան հռոմէական կայսրութեան եւ պարսկական Սասանեան կայսրութեան միջեւ, շրջանը անցաւ հռոմէացիներու տիրապետութեան տակ: հռոմէացիները Կարին քաղաքը ամրացուցին եւ զայն վերանուանեցին Թէոտոսիոս-բոլիս, իրենց կայսրին անունով: Թէոտոսիոս կայսրի յաջորդները նոյնպէս քաղաքը նոր եւ հաստ պարիսպներով աւելի ամրացուցին եւ բազմաթիւ ճակատամարտերով պաշտպանեցին զայն պարսիկներու յարձակումներուն դէմ:

701 թուականին երբ Արաբ Ումայեաններու Ապտալլահ իպն Ապտ էլ Մալիքը Հայաստանը գրաւեց, Արաբները քաղաքը կոչեցին «Քալիքալա» հետեւողութեամբ հայերէնի «Կարնոյ քաղաք»-ի: 949-ին, Բիւզանդացիները վերագրաւելով քաղաքը, արտաքսեցին անոր արաբ բնակչութիւնը եւ յոյներով եւ հայերով վերաբնակեցուցին զայն:

1071-ի Մանսուկիարի ճակատամարտէն ետք, Սելճուկ թուրքերը 1049-ին Արծն քաղաքը գրաւելով մեծ ջարդ մը տուին քաղաքի հայ, յոյն եւ ասորի բնակչութեան: Արծնի կոտորածներէն փախչողները Թէոտոսիոսի պալատանեցան եւ զայն սկսան կոչել «Արծն-Ռում», այսինքն «Հռոմէացիներու Արծնը»: Շրջանի իսլամ բնակչութիւնը քաղաքը կը կոչէր «Արզան առ-Ռում» եւ վերջը զայն կոչեցին «Էրզուրում»: Բիւզանդացիներու, Վրացիներու, Սելճուկներու, Մոնղոլներու, Լենկ թիմուրի եւ այլոց տիրապետութեան տակ ինչպէ՞ս ետք, 1514-ին Օսմանցիներու Սելիմ Ա. Սուլթանը գրաւելով քաղաքը զայն վերածեց այդ շրջանի մեծագոյն գորանոցին:

1829-1878 էրզրումը տարուբերութեամբ Օսմանցիներու եւ Ռուսներու միջեւ: 1894-1896-ի Համիտեան ջարդերէն էրզրումը անմասն չմնաց: Ռուբաթ, Հոկտեմբեր 20, 1895-

ին, մինչ հայեր իրենց առօրեայ գործերով զբաղած էին, թուրք կատաղած ամբոխը մզկիթներէն ելլելով կը յարձակի հայկական թաղամասերուն եւ հայկական խանութներուն վրայ, մեծ թիւով հայեր սպաննելով: Մինչ թուրքեր զբաղուած էին թալանով եւ ջարդով, հայկական պաշտպանողական զինուած խումբեր կը սկսին պաշտպանել հայկական թաղերը: Թուրքերը անակնկալի գալով հայերու այս զինեալ ընդդիմադրութենէն, կը նահանջեն: Մեծ թիւով հայեր կը ջարդուին եւ նիւթական ահաւոր վնասներ կը կրեն:

Դէպի էրզրում մեր ճամբուն վրայ անցանք Սարիղամիշի ռազմադաշտին քովէն: Մեր թաթար ուղեկցորդը բացատրեց թէ ինչպէս 90,000 թուրք զինուորներ Ռուսներու կրակոցներէն, թիֆոսէն եւ մանաւանդ ցրտահարութենէն սպաննուած կամ մահացած էին այս ճակատամարտի ընթացքին: Ան ըսաւ նաեւ որ թուրքերը էնվէր Փաշան շատ չեն սիրեր, քանի որ ան պատճառ եղաւ որ Օսմանեան կայսրութիւնը Համաշխարհային Առաջին Պատերազմին մէջ մտնէ եւ թուրքի մեծ վնասներ պատճառէ: Նոյնպէս, իր ապիկարութիւնը Սարիղամիշի պատերազմին պատճառ դարցած է ահաւոր կորուստներու:

Սարիղամիշի ճակատամարտը Սարիղամիշի ճակատամարտը տեղի ունեցաւ Դեկ. 22, 1914 - Յունուար 17, 1915-ին:

Թուրքիոյ Պատերազմական նախարար Իսմայիլ էնվէր Փաշայի անմիջական ծրագիրն էր Արդվիւնը, Արտահանը, Կարսը եւ Պաթլումի նաւահանգիստը գրաւել: Էնվէր Փաշային հեռակայ նպատակն էր թիֆլիսը գրաւել եւ ապա յառաջանալ դէպի Ասիա եւ տեղւոյն մահաբերականներն ու թուրանական ցեղախումբերը միացնելով հիմնել Բան - Թուրանական նոր կայսրութիւն մը:

Գերմանական զինամթերքով զինուած Օսմանեան 3-րդ Բանակը կը գտնուէր էրզրումի մէջ, Հասան Իգէթի հրամանատարութեան տակ: Ռուսական բանակները 25 քմ. հեռաւորութան վրայ դիրքաւորուած էին էրզրում-Սարիղամիշ գիծին վրայ:

Էնվէր Փաշայի ծրագիրն էր երեք զորաբաժիններով շրջապատել Ռուսական զօրքերը եւ բնաջնջել զանոնք:

ճակատամարտի երկայնքը 1250-1500 քմ. էր, Սեւ Մովէն մինջեւ Վանայ Լիճ: Շրջանը 1500-2000 մետր (5000 - 6500 ոտք) բարձրութեան վրայ կը գտնուէր եւ շատ պաղ էր, ձիւնապատ եւ ենթակա ձիւնամրրիկներու:

Օսմանեան 3-րդ բանակը էնվէրի հրամանատարութեան տակ ունէր 180,000 զինուոր, 73 արագահարութեամբ, 218 հրետանի եւ այլ մասշտապի զէնքեր: Բարեբախտաբար թուրք զինուորները ձմեռնային համազգեստներ չունէին, եւ իրենց գլխաւոր սննդաղբիւրը հաց եւ ձիթապտուղ էր:

Ռուսական Կովկասեան բանա-



Սանասարեան վարժարանը

կը ունէր լաւ զինուած 65,000 զինուոր եւ շուրջ 40,000 հայկական կամաւորական զուգեք, ինչպէս նաեւ քանի մը հազար յոյն եւ վրացի կամաւորներ: Հայերը, յոյներն ու վրացիները վստահ էին Ռուսական բանակներուն յաղթանակին եւ մեծ յոյսեր կապած էին պատերազմի վերջաւորութեան պատագրուելու Օսմանեան արիւնարբու լուծէն:

Դեկտեմբեր 29, 1914-ին թրքական բանակները կը սկսին շարժիլ: 12,000 զինուորներով կը յարձակին Սարիղամիշի վրայ եւ 6,000 զոհ տալէն ետք կը նահանջեն:

Պատերազմի ճակատին վրայ բազմաթիւ ճակատամարտերէ ետք, Յունուար 15, 1915-ին Օսմանեան բանակը վերջնականապէս կը պարտուի Սարիղամիշի մէջ: Ռուսական բանակին եւ հայկական կամաւորական զուգեքներուն յարձակումներուն որպէս արդիւնք՝ թուրքերը կ'ունենան 90,000 մեռեալ, 10,000 վիրաւոր եւ 50,000 պատերազմական զերի: Զէրոյէն վար 40 աստիճան ցուրտէն, բազմահազար թուրքեր ցրտահարուեցան ու սառեցան: Ռուսական բանակը կ'ունենայ 16,000 զոհ՝ ճակատամարտերուն մէջ եւ 12,000 մահ՝ թիֆոսի եւ ցրտահարութենէ:

Հայկական կամաւորական զուգեքը շատ արագաշարժ էին եւ քիչ մը ամէն տեղ բազմաթիւ յարձակումներով շատ նեղութիւն կու տային թուրքերուն եւ կը դանդաղեցնէին անոնց յառաջխաղացքը: Որպէս շրջանի բնիկները, անոնք շատ լաւ գիտէին ճամբաները, լեռնային արահետները եւ լաւ պաշտպանուած էին ցուրտէն: Որպէս կատաղի եւ վրիժառու կուռուներ, անոնք շատ մեծ օգտակարութիւն ունեցան Ռուսական բանակներուն: Շատ մը ճակատներու վրայ հայկական զորագունդերը ուղղակի մենամարտերու մէջ էին թուրքերուն հետ եւ հազարաւոր թուրքեր Մուհամմէտի քով ճամբեցին... :

Էնվէր Փաշան, Իսթամպուլ վերաբաժին իր պարտութիւնը արդարացնելու համար, գլխաւոր պատճառներէն մին նկատեց հայերուն «դաւաճանութիւնը» եւ կամաւորական զուգեքը:

1915 Ապրիլին, թուրքերը էրզրումի շրջանէն ձերբակալեցին 450 հայ մտաւորականներ, համայնքի մեծերը, խմբագիրները եւ քաղաքի երեւելի հարուստ վաճառականները եւ Մալիսին սպաննեցին զանոնք: Զարդերէն առաջ աւելի քան 20,000 հայեր կը բնակէին էրզրումի մէջ: Աքսորէն, ողջ-ողջ թաղուելէն եւ ջարդերէն ետք, 1919-ին հազիւ 100 հայեր ողջ մնացած էին հոս ու հոն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՆՏՈՏՈՒՔ

ՍԵՅՐԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Սուրճ առնելու ցանկությունները Գլխավորը գտնուող սրճարանից ներս մտալ, անուան ձայնարկող կանչ լսեցի, շուրջկողմս հայեացք նետեցի, տեսայ մէկը ձեռքով է անուան, ճանաչեցի, վահէն էր՝ ծանօթ բարեկամս, մօտեցայ իրեն, սեղանի շուրջը բացի վահէից ինձ անծանօթ մէկին նկատեցի: Վահէն կանգնած վիճակում քաղցր ժպիտով ասաց.

-Շատ ուրախ եմ քեզ հանդիպելուս, խնդրեմ, համեցիր այստեղ:

Նա աթոռը ցոյց տալով առաջնորդեց՝ նստեմ, ապա սեղանակից անձին ներկայացնելով ասաց.

-Շահէ՛, սա Ռուբէնն է՝ իմ լաւ ընկերներէս:

Փոխադարձ ծանօթութիւն գոյացաւ:

Վահէն իմ համաձայնութեամբ սուրճ գնելու պատրաստութիւն տեսաւ եւ արդէն իսկ ես էլ իմ սուրճն ունէի: Լուռ տեղումս հետեւեցի նրանց: Կարծես իմ միանալու րոպէին խօսակցութեան նիւթը ընդհատուել էր, շարունակուեց Շահէի միջոցաւ.

-Այո՛, պարապութիւնը ստիպեց առաւօտեան տնից դուրս գամ գործ փնտռելու համար: Համոզուած ինձ ներշնչում էի, որ փնտռուողով աշխատանք եմ գտնելու: Թէեւ կինս ուղղակի չէր գօտում, սակայն կուսումնասիրող էր, որ սրտում ուզում էր՝ մի տեղ գբադուէի եւ եկամուտ բերէի, ինքս էլ կնոջս այդ անխօս հոգեբանութիւնը կհետնէի նկատելով սահմանափակ թոշակը հագիւ հազ կենամանունըի եւ բնակարանի վարձի համար էլ միայն բաւականանում, այն էլ իննամս քաղաքացիական պատերազմի ժամանակ: Այլ եւ այլ պահանջների հետ: Վահէն ընդհատելով նրան հարց ուղղեց.

-Չհասկացայ, չասացիր, ինչպէ՞ս պիտի գործ փնտռէիր, ես գիտեմ, որ տարբեր թերթերի գովազդերից են մարդիկ տեղեկանում եւ կամ էլ ծանօթ մէկի օգնութեամբ դիմում կատարում:

-Այս անգամ իմ գործի փնտռուողը տարբեր էր, ուղղակի դիմեցի Լոս Անջելոսի Down Town (քաղաքի կենտրոն) կողմում առևտրական կենտրոնը, մի քանի հատ վաճառատուն մտնելով բանաւոր աշխատանքի դիմում կատարեցի, գրեթէ իրանցի վաճառատնէր, որոնց հետ պարակերէն կը խօսէի, միայն մէկ տեղում հայր հանդիպեցի:

-Առաջին անգամն է, որ քեզանից լսում եմ գործ փնտռելու այս տեսակը, անշուշտ գործ փնտռելը, ընդհանրապէս պատուաւոր գործով զբաղուելը գնահատելի է, սակայն իմ կարծիքով սխալ ձեւն էս ընտրել եւ ոչ գործնական, քանի որ մարդիկ առանց քեզ ճանաչելու, ինչպէս կարող են քեզ վստահել, եւ ինչ, յաջողեցի՞ր, վահէն էր խօսողը:

-Նախ ասեմ որ շատ տեղեր չմտայ, մի տեսակ ամաչում էի, յետոյ գրեթէ համատարած պարապութիւն էր տիրում, այդ մի քանի տեղերում էլ որպէս հեզանք ասացին. -այ մարդ ուր է աշխատանք, եթէ կարող ես դու մեզ համար աշխատանք գտիր, տեսնում ես պարապ ու սարապ նստած ճանճ կենք ըլնում, այնուհանդերձ մէկը գտնուեց, որ հեռախօսիս համարը նշանակեց յետոյ լուր տալու համար, որն մասամբ յուսատու

առիթ հանդիսացաւ: -Վստահ այդ մէկն էլ որպէս հայ ես եղել եւ հայերին ճանաչելով անհրաժեշտութեան դէպքում քեզ հրաւիրի աշխատանքի, դարձեալ վահէն էր:

Մեր սեղանի շուրջը դադար տիրեց, իւրաքանչիւր ոք մասնաւոր խաւաքարթէ մեծկակ բաժակներով մէջ կը վայելէր ամերիկեան սուրճը: Սրճարանի միջոցառողը յագեցած էր սուրճի բուրմունքով: Իրիկնապահի այս ժամին գրեթէ սրճարանում աթոռ-սեղանները լեցուն են, յաճախորդներ պոչ-պոչի այդ տեսակ բաժակների մէջ սուրճ եւ այլ ըմպելիքներ կառնէին եւ կը մեկնէին, որոշներ էլ կը նստէին: Երկարական ինքնաեռներէս բխող, եռացող սուրճի ֆշշոցը, օձի ֆշշալու տպաւորութիւն էր թողնում, որը ոչ թէ վախենալի էր, այլ հաճելի, որը շարունակ կը լսուէր գործաւորների արագաշարժ ձեռքի հպումով:

Կտրելով լուրջութիւնը ասացի. -Քիչ առաջ հնչող նիւթի մասին խօսակցութիւնը ինձ տարաւ դէպի իմ դեռահաս պատանեկութեան տարիներին, երբ դպրոցական էի Թեհրանում: Շատ պարզ լիշուս եմ մի անգամ դպրոցական երեք ամիսների արձակուրդի սկսման օրերին քաջալերուած գործ փնտռելու ելանք մի քանի հոգիներով շուկայի արհեստաւորական տեղամաս խանութները մտնելով եւ հարցնելով՝ -արդեօք աշակերտի պէտք կ'ունենա՞ք: Ես գտայ աշխատանք մի հայ վարսավորի մօտ: Ուրախ էի, որ աշխատանք եմ գտել, որովհետեւ թէ՛ արհեստ էի սովորում եւ թէ՛ չնչին վարձատրուում գոհացնելով իմ անձնական ծախսերը, թէ՛ ծնողներս գուր-գուրանքն էի վայելում կտրուելով փողոցից ու աննպատակ դեզերումներից: Այնպէս որ նմանօրինակ փնտռուողը նորութիւն չէ, բայց նկատի առնելով մեր երեքիս յառաջացած տարիքը, կարծում եմ դժուար թէ անծանօթ գործատէրը գործի հրաւիրի:

-Ես էլ համաձայն եմ, սակայն աշխատելու հետ հակառակ չեմ, տարիքը ինդիր չէ, եթէ առողջութիւնը ներում է, տեսնենք Շահէնը ինչ տեսակ աշխատանք էր փնտռում եւ ի՞նչ փորձառութիւններ ունի, վահէն էր հարց տուողը:

-Յատուկ մի մասնագիտութիւն չունեմ, սակայն գրասենեակային, հաշուապահական, պահեստային եւ բանկային տարբեր աշխատանքների փորձառութիւն եւ անցեալ ունեմ, ոչ թէ այստեղում, այլ՝ Իրանում:

Ես էլ իմ հերթին խօսք առնելով դրա շուրջ կարծիք յայտնեցի՝ -Մասնագիտութիւնը որեւէ բնագաւառում անհրաժեշտ է, մասնագէտ մարդկանց համար աշխատանքի դռները բաց են, ուր էլ գնան յարգանքով աշխատանքի կը հրաւիրուեն: Մեր զաւակներին պէտք է քաջալերենք անպայման բարձրագոյն ուսման ճանապարհով, մեր ժամանակների պահանջներին յարմար մասնագիտութիւն ձեռք բերեն, որպէսզի բարեկեցիկ եւ ապահով կեանք ստեղծեն: Բարեկեցիկ եւ նիւթապէս ի վիճակի հայը կարող է նաեւ իր ազգին եւ հայրենիքին օգտակար լինել, Սփիւռքում իսկապէս մենք մեծապէս պարտական ենք այդպիսի բարեբար մարդկանց գոյութեան, որոնք իրենց նուիրատուութիւններով

Հայրենի տաղանդաւոր քանաստեղծ, որը իր արժանի տեղը ունի Պեղեգի այս խոր հին մէջ: Սեյրան Մալխասեանի Պեղեգիան հոգու միջ է, որու նպատակն է, բարոյս պէս դաստիարակել մարդկանց:

Իր քանաստեղծութիւններու գերակշիռ մասը, ունի հայրենասիրական բովանդակութիւն: Բանաստեղծի գգայուն սիրտը կը տառապի, տեսնելով հայրենի աշխարհի կորսնցուցած բարոյական արժէքները, ուր կ'իշխէ կեղծիքը, վերացած է իրաւունքն ու արդարութիւնը, առաւել կործանարար իշխանութիւնը, որ փոխանակ բարեւաւելու ժողովուրդին վիճակը աւելի պատուհաս դարձած է անոր գլխուն:

Բանաստեղծը ի տես այս բոլորին, չէր կրնար անտարբեր գրչով պատկերացնել վիշտը, տառապանքը, կարօտը, արտագաղթը, ան իր տողերում մէջ արտայայտած է իր մեծ ցաւն ու ափսոսանքը: Հոգեկան այս ծանր վիճակը, քանաստեղծը իր գեղարուեստական հարուստ քանապաշարով վերածած է բարձրարժէք Պեղեգիայի, որը ընթերցողին կը մղէ խորհելու եւ մտորելու: Պաշտամունքի հասնող մեծ սէրը հայրենիքին, հողին, մայրենի լեզուին, գրողը իր երգերով նպատակ ունէր ամրացնել մայրենի լեզուն եւ ամրապնդել ազգային ինքնագիտակցութեան ոգին:

Պեղեգը, հայրենիքին նուիրուած անձնաւորութիւն, իր քանաստեղծութիւններով անդադար տուն կը կանչէր պաղուխները, կը ձգտէր տոգորել անոնց մէջ հայրենասիրական ոգին:

Բանաստեղծը ջատագովելով բարոյական եւ գեղեցիկը իր տողերում մէջ մարդասիրական բարձր գաղափարները, արտայայտած էր քանաստեղծական գեղեցիկ եւ ինքնատիպ ոգով:

Սեյրան Մալխասեան, ինքնատիպ քանաստեղծ է, իր պատկերաւոր տողով, խոհով եւ ապրումով:

Հայրենի տաղանդաւոր քանաստեղծը իր հայրենասիրական այս տողերը մասնաւոր ձեւով է Արարատի ընթերցողներուն:

ՀԱՅԱՍՏԱՆ (Օրհներգ)

Իմ Հայաստան ի՛մ մայր, ի՛մ հայրենիք,
Քո շնչով եմ ապրել եւ շարունակ,
Քո կարօտի հուրն է իմ մէջ ալիք - ալիք
Իմաստութիւն դարձել պարզ ու շիտակ:
Բորբոքել ես դու իմ երեւակայութիւնը մերք,
Մերք թախիծ ես դարձել սրտիս խորքում,
Մէկ գալիքին միտող յոյսի հզօր մի երթ,
Մերք կարօտն ես անծիր դու իմ հոգու:
Դու ես եղել հոգուս հաւատամբը անբիծ,
Քո երգերն են ինձ միշտ թելեր դարձել,
Դու երկունքն ես եղել դու թոխէր կամփիս,
Եւ իմ հոգում յաւէտ աստուածացել:

Հայկեան նետի փառքն է եղել երկունքն քո,
Աստղերին է յառնում քո ուղին,
Դու չես եղել երբեք տմարդի կամ անգոյ
Անվարան ես հարթել քո մեծուղին:
Դարերի մէջ կոփուած դարերի դասն առած
Դու ցնորք եւ անչար երկրի բիրտ,
Քո վանքերի երթով քաղաք ու գոյ,
Նարեկացու հետ ես դու օրհնում:
Աստուծոյ օրհնա՛նքն քեզ, երկիր իմ աւետեաց
Կ'ուզեմ, որ նոր ուժով փթթե՛ս, ծաղկե՛ս,
Ու քո երեւոյցի որդոց միաբանած,
Դրախտ երկիր դառնաս Արարատին ի տես:

րով համայնքի կարիքներին սատար են կանգնում:

Խօսակցութիւնը աւելի լրջացաւ, շեշտուեց արհեստների կարեւորութիւնը: Դեռ հիմա էլ Միջին Արեւելեան երկրներում, օտար ազգիները մեծ վստահութեամբ օգտուում են հայ արհեստաւորների ծառայութիւններից, դրանով հանդերձ որ արտագաղթի պատճառով մեծապէս պակսել է թիւը նրանց դէպի արեւմտեան երկրներ: Նկատելով որ այստեղ Լոս Անջելոսում մեծ գաղութ է կազմակերպուել շատ տեղիին կը լինի հայ արհեստաւորների միութիւն կեանքի կոչել, ինչպէս գոյութիւն ունի հայ բժիշկների, հայ իրաւաբանների եւ այլն միութիւններ, հայ արհեստաւորի առաքինի ոգով նոր ցանկացողներ դաստիարակել եւ սովորեցնել ու նաեւ հարկենիքին օգտակար լինել:

-Լաւ առաջարկ է, Թեհրանում այսպիսի միութիւն կայ եւ բաւական լուրջ աշխատանք է տանում, երկրոր ժամանակ է, Արցախում խողովակաշինութեան գործարան է հիմնել, արցախցի աշխատաւորներ են աշխատում:

Վահէն շարունակելով խօսքը ասաց.

-Արհեստը միշտ էլ հայ մարդու մօտ կարեւորութիւն է ներկայացրել: Մեր դասականներից՝ Ղազարոս Աղայեանը իր «Անահիտ» երկարաշունչ պատմութեան շեշտում է արհեստի անհրաժեշտութիւնը իւրաքանչիւր հայ մարդու կեանքում, ուր թաւաղողի տղայ՝ Վաչականը իր սիրած գեղջուկ աղջկայ՝ Անահիտի, պահանջին համաձայն ջուլհակութեան արհեստն է սովորում որպէսզի նրա սիրոյն արժանանայ: Այդ արհեստը չեստագային նրան մեծ վստահից փրկելու առիթ է դառնում:

Մենք տարուած մեր խօսակցութեան նիւթով բաւական օգտակար մտքերի փոխանակութիւն ունեցանք, ուր նաեւ հղովուեց ու խոնարհուեց մեր հայրենիքն ու սփիւռքահայութեան ապագան: Այստեղ կարելի է չիշատակել մեր նշանաւոր գրող Վարդգէս Պետրոսեանին, թէ՛ -երբ մի քանի հայեր կեր ու խումի կամ այլ առիթով իրար շուրջ են հաւաքուում, անպակաս է հայրենիքի եւ մեր ժողովուրդի մասին կենաց խմելն ու խօսելը: Արդարեւ նա շատ ճիշտ է բնութագրել, քանի որ դա գալիս է մեր սիրուց եւ մտահոգութիւններից հայրենիքի հանդէպ:

ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՁՈՐՍ ԻՐԱՔԱՆՉԻՐ ԱԼՖԱ-ԿԻՆ ԿԸ ՓՆՏՈՒ ՏՂԱՄԱՐԴՈՒՆ ՄԵՉ

Բնականաբար, առաջին հերթին պետք է հասկնալ, թե որոնք կը համարուին Ալֆա-կիններ: Ալֆա-կինը ուժեղ, վեհ ու հմայիչ է եւ անոր սիրտը շատ դժուար է գրաւել: Անոր հետ ապրելը այնքան ալ դիւրին չէ, քանի որ այսպիսի կնոջ պահանջները շատ են: Նման կիններ գիտեն, որ յարաբերութիւններու մէջ գլխաւորը համագործակցութիւնն է եւ անոր ամուսինը պետք է դառնայ իր գործընկերը, իր վստահելի անձը եւ լաւագոյն ընկերը:

Իսկ բնաւորութեան ո՞ր գիծերը Ալֆա-կինը կարեւոր կը համարէ տղամարդուն մէջ:

1. Տղամարդը կը քննադատէ, բայց չի վիրաւորեր զինք: Ան կրնայ կատակով նշել այն, որ իսկապէս կը մտածէ Ալֆա-կնոջ մասին, բայց երբեք պետք չէ ոտնահարէ անոր զգացումները: Տղամարդը կրնայ անգամ հեզնել կինը, քանի որ անոնք երկուքն ալ կը պաշտեն ծաղրը:

2. Անձեռնոց կը նետէ կնոջ: Տղամարդը նոյնքան ուժեղ է, որ քան կինը եւ կը ստիպէ անոր աւելին ընել, ձգտել ու կատարելագործուիլ: Իսկ ասիկա հաճելի է Ալֆա-կիններուն:

3. Չի նախանձիր: Տղամարդը այնքան ինքնավստահ է եւ այնքան լաւ կը ճանչնայ իր ընտրեալը, որ երբեք թոյլ չի տար, որ նախանձը խոչընդոտ հանդիսանայ իրենց յարաբերութիւններուն մէջ: Ան գիտէ, որ կնոջ վերահսկելու պետք չկայ, քանի որ իրենց սէրը ամուր հիմքերու վրայ է:

4. Տղամարդը ոչ մէկ կնկարկէ ունի կնոջմէ: Ան իր ծրագրերը կ'իրականացնէ եւ կը վայելէ կեանքը: Ուստի, ան սպասելիքներ չունի կնոջմէ:

5. Ան գիտէ, թէ ինչպէս պետք է բարձրացնել կնոջ տրամադրութիւնը: Ան կը հասկնայ, որ միայն իր հետ կինը երջանիկ ու թեթեւցած կը զգայ ինքզինք: Տղամարդը կը գիտակցի, թէ ինչ պետք է ըսէ, երբ կինը բարկացած է: Ան կը հասկնայ, որ Ալֆա-կինը պետք է ունենայ իր սեփական կեանքը, բայց հարկ եղած պարագային ան իր խելացի խորհուրդով կամ ջերմ համբոյժով կրնայ հասնիլ օգնութեան:

6. Ան անկեղծօրէն ներողութիւն կը խնդրէ: Եթէ տղամարդը որեւէ բան սխալ ընէ, կը գիտակցի եւ ներողութիւն կը խնդրէ, որպէսզի ուղղէ զայն: Ալֆա-կինը չի փափաքիր իր կողքին տեսնել մէկը, որ յանդիմանաբար կ'ապրուի իր չարատուութեան պատճառով: Ան չի կարծիք, որ ինչպէս պատճառատու է ցաւ պատճառելու իրեն կամ իր յարաբերութիւնները: Ան գիտէ, թէ ինչ կ'ուզէ ինքը, սակայն կը գնահատէ նաեւ կնոջ ցանկութիւնը, քանի որ շատ յաճախ անոնք երկուքն ալ ունին նոյն երազանքները: Ան երբեք խոչընդոտ չի հանդիսանար կնոջ յաջողութիւններուն ճամբուն վրայ: Այսպիսի տղամարդը յստակ քայլերով յառաջ կը շարժի եւ կ'ուզէ, որ իր կողքին կանգնած կինը նոյնպէս չզիջի իրեն:

7. Տղամարդը յառաջ կը շարժի նոյն արագութեամբ, ինչպէս կինը: Այո, անոր յաջողութիւնները ասպարէզի մէջ եւ կեանքի նպատակները նոյն թափով կը զարգանան, ինչպէս Ալֆա-կնոջ պարագային: Ան գիտէ, թէ ինչ կ'ուզէ ինքը, սակայն կը գնահատէ նաեւ կնոջ ցանկութիւնը, քանի որ շատ յաճախ անոնք երկուքն ալ ունին նոյն երազանքները: Ան երբեք խոչընդոտ չի հանդիսանար կնոջ յաջողութիւններուն ճամբուն վրայ: Այսպիսի տղամարդը յստակ քայլերով յառաջ կը շարժի եւ կ'ուզէ, որ իր կողքին կանգնած կինը նոյնպէս չզիջի իրեն:

8. Լաւագոյնը կը համարուին այն գոյգերը, որոնք պատրաստ են սորվեցնել իրարու: Անոնք պատրաստ են կիսելու իրենց նոր տեղեկատուութեամբ եւ նոր հայեացքներով, քննարկել այդ մասին եւ ընել հնարաւոր ամէն ինչ, որպէսզի սորվին եւ սորվեցնեն իրենց ընկերոջը:

9. «Եթէ կրնաք ծիծաղեցնել կինը, ուրեմն կրնաք ստիպել անոր ընել ամէն ինչ»: Մերիլին Մոնրոյի այս խօսքերը միշտ արդիական են, քանի որ կինը չի կրնար երջանիկ ըլլալ մէկուն հետ, որ կատակելու զգացում չունի:

10. Ան գիտէ, թէ երբ պետք է պնդէ իր ըսածը եւ երբ՝ զիջի: Եթէ տղամարդը վստահ է իր ճշմարտացիութեան մէջ, ուրեմն պիտի պնդէ իր տեսակէտը եւ պիտի վիճի կնոջ հետ: Ան կը վստահի իր ուժերուն եւ գիտելիքներուն ու կրնայ կարծիքը գնահատել փաստէն: Բայց եթէ հասկնայ, որ ինչ-ինչ հարցերու մէջ կինը աւելի փորձառու է, ուրեմն ան առանց խնդրի պիտի զիջի եւ թոյլ տայ կնոջ ըլլալ նախաձեռնողի դերին մէջ:

ԵՐԿԱՐԱՏԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մտածած էք բնաւ, թէ ինչո՞ւ որոշ գոյգերու սէրը տարիներու ընթացքին աւելի կ'ամրապնդուի, իսկ ուրիշներ յաճախակի տարաձայնութիւններ կ'ունենան: Որոնք են երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքները.

1. Հաւատարմութիւն. Իրական յարաբերութիւններու հիմքը հաւատարմութիւնն է, որ ամուսնութեան եւ սիրոյ գրաւականն է: Հաւատարմի մարդոց համար փոխադարձ վստահութիւնն ու նուիրութիւնը աւելի կարեւոր է, քան տարաձայնութիւններն ու նման այլ մանրուքները:

2. Շփում. Երկարատեւ յարաբերութիւններ հաստատելու հարցով շփումը մեծ դեր ունի: Պէտք է մոռնալ բոլոր տեսակի էլէկտրոնային սարքերու մասին եւ հան-

գիստ խօսակցիլ: Անկեղծ շփումը յարաբերութիւններու մէջ վստահութեան եւ երջանկութեան հիմքն է: Եթէ շփում չկայ, գոյգերը չեն կրնար երկար ապրիլ իրարու հետ:

3. Կայունութիւն. Արիստոտէլ ըսած է. «Մենք մեր մշտապէս կատարող գործերն ենք: Ուստի, կատարելութիւնը ոչ թէ գործողութիւն, այլ՝ սովորութիւնն է»: Ճիշդ եւ երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքը կայունութիւնն է: Եթէ ամուսինները իրենց գուզներով հետաքրքրութիւնները սեփականէն վեր կը դասեն եւ կը փորձեն իրենց ներդրումը ունենալ յարաբերութիւններու կայունութեան մէջ, ուրեմն անոնց սէրը յարատեւ պիտի ըլլայ եւ ժամանակի ընթացքին անիկա միայն պիտի ամրապնդուի:

ՎԵՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԿՊՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Եթէ կը կասկածիք՝ արդեօք իսկապէս կը սիրէք ձեր ընտրեալը, թէ կապուածութիւն կը զգաք անոր նկատմամբ, ուրեմն ուշադիր կարդացէք այս վեց կէտերը: Անոնք կ'օգնեն ստանալու ձեզ տանջող հարցին պատասխանը:

-Սէրը կիրք է, իսկ կապուածութիւնը՝ անտարբերութիւն. Այստեղ խօսքը բաժանման ժամանակ գոյգերու պահուածքին մասին է:

Կ'ըսեն՝ սիրելէն ատելութիւն մէկ քայլ է. ուստի, սիրող գոյգերու պարագային բաժանման ժամանակ սիրոյ գեղեցիկ զգացումը կը վերածուի ատելութեան: Իսկ եթէ գոյգերու միջեւ կապուածութիւն է, ուրեմն բաժնուելու պահուն անտարբեր պիտի ըլլան եւ անգամ չզգայրանան:

-Սէրը անվերապահ է, իսկ կապուածութիւնը՝ եսասիրական. Սիրող գոյգերը անվերապահօրէն կը նուիրուին իրարու: Զոյգերէն ամէն մէկուն համար միւսին պահանջներն ու ցանկութիւնները սեփականէն վեր կը դասուին: Իսկ կապուածութեան ժամանակ գոյգերը եսասիրական մտեցում կը ցուցաբերեն իրարու հանդէպ:

-Սէրը բարդ է, իսկ կապուածութիւնը բարդ է, երբ միասին էք. Իրական սիրոյ պարագային ամէն ինչ շատ դժուար է: Կը թուի՝ ամէն ինչ պետք է գեղեցիկ ու պարզ ըլլայ, բայց կեանքը իր օրէնքները կը թելադրէ, եւ սիրող գոյգերը պետք է մշտապէս պայքարին իրարու կողքին ըլլալու համար: Իսկ կապուածութեան պարագային գոյգերը պարզապէս կը մտածեն, թէ շաբաթը քանի անգամ պիտի հանդիպին: Այս պարագային յարաբե-

րութիւնները չեն զարգանար եւ թմրանիւթի նման՝ ազդեցութիւնը վաղ թէ ուշ կ'անցնի:

-Սէրը ազատութիւն է, իսկ կապուածութիւնը՝ բանտարկութիւն. Երբ դուք կը սիրէք, չէք մտածեր սիրած էակը մշտապէս ձեր տեսողաշտին մէջ պահելու մասին: Պէտք չկայ զգացումները հասկնալու համար ամէն վայրկեան իրարու հետ ըլլալ:

Իսկ երբ գոյգերը կապուած են իրարու, իրական սիրոյ զգացում չկայ, քանի որ անոնք այդ սէրը կը զգան միայն իրարու ներկայութեան պարագային:

-Սէրը կ'ընդլայնէ սահմանները, իսկ կապուածութիւնը՝ կը սահմանափակէ: Իրական սէրէն բացի, ոչինչ այս աշխարհի վրայ չի կրնար ամենագորութեան զգացում յառաջացնել գոյգերուն մօտ: Սէրը նոր շունչ եւ ուժ կու տայ ձեզի, եւ դուք պատրաստ էք գրաւելու ամբողջ աշխարհը:

Իսկ կապուածութեան պարագային սէրը կը վերածուի իշխանութեան համար պայքարի: Զոյգերէն ամէն մէկը կ'ուզէ հաւաստիանալ, որ յարաբերութիւններու «ղեկ»-ը իր ձեռքն է:

-Սէրը յաւերժ է, իսկ կապուածութիւնը՝ ժամանակաւոր. Երբ դուք իսկապէս կը սիրէք, ուրեմն ձեր սէրը յաւերժ է: Նոյնիսկ եթէ յարաբերութիւնները այլ ընթացք կը ստանան, եւ գոյգը կը բաժնուի, միեւնոյնն է, ան կը մնայ ձեր կեանքի միակ սէրը: Իսկ կապուածութեան պարագային գոյգերը նման զգացումներ չեն ապրիր: Անոնց կապուածութիւնը ժամանակաւոր է, իսկ յարաբերութիւնները՝ կեղծ:

ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԻՆԵՐՈՒ՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ձեր ամուսինի ներկայութեան միշտ պահպանեցէք հիանալի տրամադրութիւն, ժպտացէք եւ ծիծաղեցէք, յատկապէս, երբ ան կը սրամտէ: Զգտեցէք դառնալ աւելի մաքրասէր, աւելի հաւաք: Փնթիութեան ու թափթփածութեան պատճառով ձեր ամուսինը կրնայ հեռանալ ձեզմէ: Աշխատեցէք ըլլալ աւելի կանացի: Յաճախ օգնութեան դիմեցէք հայելին: Ձեր ամուսինին համար եղէք քուրթիզանուհի, իսկ մնացեալ բոլորի՝ ազնիւ եւ անհասանելի: Հագուելու ժամանակ հաշուի առէք ոչ միայն ձեր շքեղ արտադրանքները, այլեւ՝ առաջին հերթին՝ ձեր ամուսինին ճաշակը: Հետաքրքրուեցէք ձեր ամուսինին գործով, մասնագիտութեամբ՝ ընդգծելով, որ ամէնէն կարեւորը կը համարէք անոր գործը:

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԸՆԵԼ ՉՏՆՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կ'ուզէ՞ք ամէն օր լաւ տրամադրութիւն ունենալ: Շատ դիւրին է, պետք է հետեւիլ հետեւեալ խորհուրդներուն. 1) Քնանալու պահուն մտածեցէք միայն լաւ բաներու մասին: Այդ պարագային դուք պիտի կարենաք լաւ տրամադրութեամբ քնանալ, եւ յաջողօր օրը անցնել դրական մթնոլորտի մէջ: 2) Մի՛ կեղբորոնանաք այն ամէնուն վրայ, որոնք կը փճացնեն ձեր տրամադրութիւնը, բայց ոչ մէկ ձեռով կարելի է փոխել: 3) Ծրագրեցէք որեւէ հաճելի բան: Թէկուզ եթէ անոր հասնելու համար շաբաթներ կամ նոյնիսկ ամիսներ պահանջուին ձեզմէ: Հաւատացէ՛ք, հաճելի սպասումը այդ ամբողջ ընթացքին ձեզի պիտի օգնէ վայելելու իւրաքանչիւր օրը:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածախապէս եւ մանուկներու Քայրափրօքիչ բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօտային եւ մկանային ցտեղի:
Ինքնաշարժի վթառի նեւրալգիա պատճառով
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈ **Մարտ 20-Ապրիլ 19**
Այս շաբաթ պիտի ստիպուիս երկու բարեկամներու միջեւ ընտրութիւն կատարել որպէսզի հարց մը խաղաղութեամբ լուծես: Վստահ եմ ճիշդ ընտրութիւնը պիտի կատարես: Թռիչք մը դէպի հեռու վայր, երջանկութիւն պիտի պատճառէ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,19,22,33

ՅՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
Այս շաբաթ գործիդ դժուարութիւնները մարտահրաւերի դուռ մը պիտի բանան գործընկերներուդ միջեւ: Խոչընդոտներու չհանդիպելու նպատակով քու ուղղութիւնդ մի շեղեր: Տնտեսական տագնապ մը յաջող դուրս պիտի գաս: Ուշադիր եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 21,26,30,34,38

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
Այս շաբաթ իւրաքանչիւր օր տարբեր նորութիւններ պիտի բերէ քեզի: Ընտանիքիդ անդամներուն հետ ազնուութեամբ վարուէ, զանոնք քաջալերելը մեծ աշխատանք է, սակայն մեծ ուրախութիւն պիտի պատճառէ իրենց: Մի փորձեր ուրիշի նմանիլ:
Բախտաւոր թիւերդ են: 15,17,20,28,34

ԽԵՅՉԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
Այս շաբաթ պարտութեամբ պիտի նահանջես գործդ, մեղադրելով աշխատակիցդ: Յուսաախաբ մի ըլլար: Կոնակդ մի դարձնէր զաւակիդ այնքան ատեն որ ան կը վստահի քեզի: Առանց ակնկալութեան բարիք մը կատարէ:
Բախտաւոր թիւերդ են: 5,8,11,15,29,38

ԱՌԻԲԾ **Յուլիս 23-Օգոստոս 22**
Այս շաբաթ քեզ չսիրող մարդիք պիտի պարտադրուին քու պատուէրներուդ հետեւելու: Օդանաւային ճամբով ժամանած հիւր մը պիտի դիմաւորես եւ հիւրընկալես: Դուռն արժանի ես լաւագոյն սիրոյն: Խաղաղ օրեր ունեցիր:
Բախտաւոր թիւերդ են: 4,14,20,28,30

ԿՈՅՍ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Այս շաբաթ կէս թողած ծրագիր մը նուիրումով եւ մեծ հաճոյքով պիտի ամբողջացնես եւ ներկայացնես: Բարեկամներուդ միջեւ բաղդատութիւն մը կարելի չէ որ դնես: Ժպիտով եւ լաւատեսութեամբ դիմագրաւէ դժուարութիւններդ:
Բախտաւոր թիւերդ են: 4,7,14,22,34

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Այս շաբաթ պիտի թուի թէ անձ մը վտանգ կը սպառնայ քեզի, հաւատարմութիւնդ մի խախտեր եւ դիրքդ մի փոխեր ոեւէ մէկու հանդէպ: Դուռն պէտք ունիս քեզի նեցուկ եւ թիկունք կանգնող անձի մը որ իրագործես երազներդ:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,21,30,35

ԿԱՐԻԾ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Այս շաբաթ գաղափարներու պէտք ունիս որ փոխանցես գործատիրոջդ: Հերոսի չափանիշով քաջ ու անվախ ըլլալու փափաքդ մի տկարացնէր: Ճամբայ մը ունիս կտրելու որ առանձին պէտք է ըլլաս: Բժիշկէդ լաւ լուրեր պիտի առնես:
Բախտաւոր թիւերդ են: 3,13,18,24,25

ԱՂԵՂՆԱԲՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 20**
Այս շաբաթ ընտանեկան պարագաներդ մէկը պիտի մեղացնէ քեզ: Թշնամիի դիրք մի առնէր: Ձուսպ եղիր արտայայտութիւններուդ մէջ, նամանաւանդ գործի մէջ, եւ գաղտնիքներդ ուրիշին մի ըսեր: Որոշումներուդ մէջ ամուր մնացիր:
Բախտաւոր թիւերդ են: 5,19,20,28,30

ԱՅԾԵՂՋԻՐ **Դեկտեմբեր 21-Յունուար 19**
Այս շաբաթ համբերութիւնդ նկատելիօրէն պիտի բարելաւուի, եւ սպասուած ազդեցութիւնը պիտի թողու գործիդ մէջ: Ծովագնացութեան առաջարկ մը պիտի ներկայանայ քեզի որու հետեւանքով լաւ շրջապատդ մը պիտի կատարես:
Բախտաւոր թիւերդ են: 8,9,15,28,33

ԾՈՎԱՆՈՅՇ **Յունուար 20-Փետրուար 18**
Այս շաբաթ անուշադրութեանդ հետեւանքով փոքր արկածի մը զոհ պիտի դառնաս: Անկեղծութեամբ եւ խոհեմութեամբ ծանր գործերդ փորձէ յառաջ տանիլ: Յաւերդ խորը չեն, երբէք մի յուսահատիր: Ուրախութիւնդ պիտի վերագտնես:
Բախտաւոր թիւերդ են: 1,11,19,22,31

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
Այս շաբաթ չակնկալուած օգնութիւն մը ճիշդ իր գործին պիտի ծառայէ, քեզ փրկելով մեծ վտանգէ մը: Ֆիզիքական կամ հոգեկան պէտքերուդ համար դիմէ ամենամտերիմ բարեկամիդ եւ վստահէ անոր: Երախտագիտութիւնդ յայտնելու մի մոռնար:
Բախտաւոր թիւերդ են: 6,9,15,18,24

ԵՐԶՐՈՒՄ - ԿԱՐԻՆ

Շարունակուած էջ 15-էն

1917-ին, Անդրանիկ Փաշան իր 6,000 զինուորներով եւ շուրջ 150,000 զաղթականներով էրզրում մի շրջանին մէջ էր երբ Պոլսեան ինքնապաշտպանութեան պատճառով Ռուսական բանակը սկսաւ քայքայուիլ: Ռուս զինուորները ամէն ինչ - հազարաւոր զէնքեր, զինամթերք, ուսեստեղէն, վրաններ եւ այլն- թողած կը նահանջէին: Ռուսական բանակին մէջ կար նաեւ Ղարաբաղցիներու 5,000 զինուորներէ բաղկացած զօրագունդը: Արդրանիկ Փաշան կը խնդրէ Ղարաբաղցիներէն որ հոն մնան, միանան իրեն, օգտագործեն Ռուսական զինամթերքը եւ միացեալ ուժերով ջախջախեն թրքական 12,000-նոց բանակը: Զօրավար Անդրանիկ կ'ըսէ նաեւ որ կարելի է տակաւին շուրջ 2,000 կռուողներ հանել զաղթականներուն մէջէն: Ղարաբաղցիք կը մերժեն Զօրավար Արդրանիկի առաջարկը: Անդրանիկ Փաշան կը խնդրէ որ գոնէ երկու օր սպասեն որպէսզի կարենայ 150,000 զաղթականներու նահանջը կազմակերպել եւ միացեալ ուժերով զաղթականները պաշտպանելով երթան աւելի ապահով վայր: Հակառակ որ Ղարաբաղցիք կը համաձայնին այս երկրորդ առաջարկին, նոյն գիշերն իսկ «կը նահանջեն»: Անոնք կը հանդիպին թրքական զօրքին եւ կը բնաջնջուին:

Կրնա՞ք երեւակայել որ եթէ Ղարաբաղցիք մնային հոն, Զօրավար Անդրանիկի հետ բնաջնջէին թրքական զօրքը, ու՞ր պիտի ըլլային այսօրուայ Հայաստանին սահմանները... քանի՞ հարիւր հազար հայեր պիտի փրկուէին ստոյգ ջարդէ: Տակաւին շատ բան կայ այս մասին ըսուելիք եւ գրուելիք:

Մայիս 1918-ին, Պրէստը Լիթովաքի Դաշինքով, էրզրումը անցաւ թուրքերու տիրապետութեան տակ: Այսօր էրզրումը շատ արդիական քաղաք մըն է: Ամէն կողմ մաքուր, բարձրաշարկ շէնքերով, լայն ճամբաներով, ծաղկապատ պարտէզներով, աւազաններով, հանրային պարտէզներով, հիւանդանոցներով, դպրոցներով եւ համալսարաններով: Հոս է «Աթաթիւրք Համալսարան»ը, որ իր 43,000 ուսանողներով թուրքերից ամենամեծ համալսարաններէն մէկն է:

Այցելեցինք Սբ. Աստուածածին եկեղեցին: Հաստ եւ բարձր պարիսպներով «պաշտպանուած» էր ան: Գաւիթին մէջ նշմարեցինք վեց հատ հին թնդանօթեր... տակաւին հաւանաբար պեղումներ կը կատարուէին պարիսպներէն ներս: Եկեղեցիի չարակից շինութիւններու փլատակները աղերսագին մեզի կը նայէին:

Սբ. Աստուածածին եկեղեցին կառուցուած է 1838 թուականին, կարմիրի գարնող սրբատաշ աւագաբարերով: 20 սիւներ վեր կը պահէին զարդաքանդակներով հարուստ գմբէթը: Կարծեմ առաջին անգամ կը տեսնէի եկեղեցիի մը քով առանձնապէս բարձրացած կլոր, մինարէի նմանող զանգակատուն մը որ շատ բարձր էր: Մեր խոմբի երիտասարդ տղաքը վեր բարձրացան, ես նախընտրեցի անոնց աչքերով զանգակատունէն դիտել շրջանի բնութեան գեղեցկութիւնները... Եկեղեցիին պարիսպին վրայ

«յաղթականօրէն» կը ծածանէր հայու արիւնի մէջ թաթախուած թրքական դրօշակը:

Եկեղեցիին պարիսպներուն շուրջ հայկական թաղերն էին, որոնք կիսաւեր վիճակի մէջ մնացած էին: Փլատակ տուններուն մեծութենէն կրնայինք պատկերացնել հոն բնակող հայերուն նիւթական բարեկեցիկ վիճակը:

Ութը սրբատեղիներով հարուստ էր էրզրումի շրջանը: Կաթողիկէ համայնքը ունէր մէկ եկեղեցի, Սբ. Աստուածածինը, կառուցուած 1840-ին, Բողոքականները ունէին իրենց աղօթատեղին, շինուած 1847-ին: Կ. Պոլսոյ երեք պատրիարքներ հոս ծառայած էին որպէս առաջնորդներ - Յարութիւն Վեհապետեան (1874 - 1884), Մարգարիտ Օրմանեան (1896 - 1908), եւ Զաւէն Տէր Եղիայեան (1913 - 1922):

էրզրումի մէջ կը գործէին Առաքելական ութը մանչերու եւ մէկ աղջկանց, երեք Կաթողիկէ եւ մէկ Բողոքական համայնքներուն պատկանող վարժարաններ:

Սանասարեան վարժարանը հիմնուած էր 1881-ին, Մկրտիչ Սանասարեանի բարերարութեամբ: Տպաւորիչ արտաքինով, երեք յարկերով այս վարժարանին ուսուցչական կազմը գրեթէ ամբողջութեամբ համալսարանաւարտ տղաք էին: 1909-ին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր 11-րդ (՞) Բոնկրէսը գումարած էր հոն:

Հայ ժողովուրդի երեսին նետուած ամենահեղինակական, ամենածաղրական երեւոյթներէն մէկն ալ ան է որ 1919-ին, Աթաթիւրքը թուրք զանազան ազգայնական խմբակներու համաժողովը գումարեց Սանասարեան վարժարանին մէջ եւ այդ քոնկրէսով ոչ միայն միացուց զանոնք եւ զինեալ պայքար սկսաւ Դաշնակիցներուն դէմ, այլ վստահօրէն կրնանք ըսել որ արդի թուրք պետութիւնը հոն սաղմնաւորուեցաւ: ՀԱՅԱՊԱՏԿԱՆ հաստատութեան կամ վարժարանի մը մէջ հիմնուեցաւ ԹԻՔԱԿԱՆ պետութիւնը: Մեր ամենաոխերիմ թշնամին ուրիշ տեղ չունէր համաժողով գումարելու եւ իր նոր պետութիւնը սաղմնաւորելու, բացի հայկական վարժարանէն... :

Սանասարեան վարժարանը շրջան մը որպէս «թրքական Լիւն» ծառայելէ ետք, այժմ նորոգութիւններու եւ վերաշինութեան մէջ է եւ շուտով պիտի վերածուի «Աթաթիւրքի եւ Քոնկրէսի Թանգարան»ի: Արդէն իսկ Աթաթիւրքի արձանը կանգնեցուցած էին շէնքին առջեւ (Հաւանաբար բացուած կատարուած է):

Այցելեցինք Սբ. Մինաս եկեղեցին: Երբ ներս մտանք, տեսանք որ պատերը տարօրինակօրէն սեւցած էին: Վստահաբար թուրքերը զանազան պատճառներով կրակ վառած էին հոն: Պատերուն սեւութիւնը քիչ մը ընկճող եւ նեղացուցիչ էր: Եկեղեցիին ներսը թէ դուրսը եւ մանաւանդ խորանին տակը բազմաթիւ փոսեր փորած էին, շատ հաւանաբար ոսկի փնտռելու: Ներքնապէս շատ սպաւորիչ եկեղեցի մըն էր, սիւնազարդ, ճարտարապետական հետաքրքրական եւ գեղեցիկ լուծումներով: Զարմանալիօրէն հոս չ'աղօթեցինք... Մուռը մեզ կը սպասէր... ուստի անմշուշ կլիմայով ճամբայ ելանք դէպի Մուռ:

ՄԱՐԱԶԴ



ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆ
(1928-2015)

Մրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսնոջն, հօր, եղբօր եւ հարազատին՝ **ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆԻ**, որ պատահեցաւ 28 Սեպտեմբեր, 2015ին:

Յուդարկաւորութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, Հոկտեմբեր 1, 2015ին, Կլենտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ապա թաղումը Հոլիվուտ Հիլզի Ֆորթ Լոն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Ալին Թաւուզճեան
- Զաւակը Շահէ Թաւուզճեան
- Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Մայք եւ Հերմինէ Թաւուզճեան եւ զակները Արման եւ Քրիստին
- Քոյրը՝ Նուարդ Թաւուզճեան
- Եղբօրը կինը՝ Գոհար Թաւուզճեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Նուպար եւ Անի Թաւուզճեան եւ դուստրը Շողիկ Թաւուզճեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Զապէլ Թաւուզճեան եւ դուստրը Մէլրի
- Եղբօրը կինը՝ Լորիս Թաւուզճեան եւ զաւակը Տէր եւ Տիկ. Կրեկ եւ Հիլտա Թաւուզճեան եւ դուստրը Ժիզել
- Եղբօրը զաւակները Տէր եւ Տիկ. Մարք եւ Լինտա Թաւուզճեան եւ զաւակները Նիքըլըս, Անտրու, Մաթիու եւ Մարք
- Տէր եւ Տիկ. Վիզէն եւ Վարդուհի Թաւուզճեան, դուստրերը Վիքթորիա եւ Վիվիան
- Տէր եւ Տիկ. Սթիւ եւ Նաթալի Քինթանար
- Տէր եւ Տիկ. Կայ եւ Լենա Լոպիանքօ եւ զաւակները Արիանա եւ Կայ (Նիլ Եորք)
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Էմմա Կէտիկեան եւ զաւակները Հրանդ, Լենա եւ Անի (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Անահիտ Կէտիկեան (Լիբանան) եւ համայն Թաւուզճեան, Պայմանուկեան, Գազանճեան, Խաչատուր, Ֆաքիճեան, Սարգիսեան, Կետիկեան, Միրզախանեան ըտանիքները եւ հարազատները:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին, զաւակներուն, քրոջ, եղբայրներուն եւ համայն պարագաներուն:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տիար Լեւոն Թաւուզճեան իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ՃՈՐՃ ԹԱԻՈՒԳՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տիկ. Հերմինէ Կոստանեան իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Միշրան ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ-ի Վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ համայն պարագաներուն:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



ԱԼԻՍ ՆԱԶԻՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Հոկտեմբեր 11, 2015, Վան Նայսի Ս. Պետրոս Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406:

Խնդրողներն են՝
Ամուսինը՝ Վարդան Նազիրեան
Զաւակը՝ Վահագն եւ Իգայէլ Նազիրեան եւ զաւակը՝ Վինսընթ-Վարդան

Դուստրը՝ Արփի Նազիրեան
Դուստրը՝ Նորա Նազիրեան եւ նշանածը՝ Սահակ Վարդգէսեան
Կեսուրը՝ Սիրարփի Նազիրեան
Տագրը՝ Համբարձում եւ Սիլվա Նազիրեան եւ զաւակները
Տագրը՝ Սարգիս եւ Լուսինէ Նազիրեան եւ ընտանիք
Եղբայրը՝ Արտաշէս եւ Լոռնի Մազմանեան
Եղբայրը՝ Աւետիս եւ Ալիս Մազմանեան եւ ընտանիք
Քոյրը՝ Անահիտ եւ Սուրէն Պապայեան եւ ընտանիք
Քոյրը՝ Անուշ եւ Օհաննէս Զաքարեան եւ ընտանիք
Եղբայրը՝ Վարդիվառ Մազմանեան եւ ընտանիք
Քոյրը՝ Այտա եւ Արմէն Մուրատեան եւ ընտանիք
Քոյրը՝ Ազատուհի Մազմանեան
Եւ համայն հարազատներն ու բարեկամները

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Pure ճաշարանին մէջ, 16935 Vanowaan Street, Lake Balboa, CA 91206

Ա. ԵՒ Մ. ՅՈՎԱՏՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 7-էն

Երականացին միայն մանկամտուրի եւ մանկապարտէզի աշակերտներուն համար:

Դուկտ. Անիթա Քոլին՝ Չղաբան եւ երաժշտագէտ, կը հաստատէ. «Երբ երաժշտութիւն կ'ունկնդրես ուղեղիդ տարբեր մասերը արթուն եւ աշխուժ կ'ըլլան: Սակայն երբ երաժշտական գործիք մը նուազես, քու ամբողջ ուղեղը կը հրաւիրես զօրաշարժի եւ մարզանքի»:

Պրն. Շահէ Մանկերանը՝ Պրաւօ մրցանքի մրցանակակիր տնօրէնը Յովսէփեան Վարժարանի, կ'երաշխաւորէ կիրարկել արուեստի չորս մարզերը՝ պար, թատրոն, երաժշտութիւն եւ գեղանկարչութիւն, Փաստօրինայէն ներս գործող հաստատութիւններուն հետ գործակցաբար, ինչպէս որ արդէն նշեցինք, սկսած է համագործակցիլ Փաստօրինայի Երաժշտանոցին հետ: Այս համագործակցութիւնը յաջողութեան եւ հպարտութեան ներշնչման աղբիւր պիտի ըլլայ մեր վարժարանի համար յառաջիկայ տարիներուն ընթացքին:

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՄԱՐԱՑԵԼ Է «ԱՐԱՐԱՏ-73»-Ի ԼԵԳԵՆԴԱՐ ԱԲԱԳ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՆԱԶԱՆԵԱՆԸ



Տեւական ծանր հիւանդութիւնից յետոյ Հոկտեմբերի 4-ին մահացել է լեգենդար հայ ֆուտպոլիստ, «Արարատ-73»-ի աւագ Յովհաննէս Զանազանեանը:

69-ամեայ Յովհաննէս Զանազանեանը ծնուել է 1946-ի Դեկտեմբերի 10-ին Աթէնքում: Նախկին կիսապաշտպանը ԽՍՀՄ առաջնութեան Բարձրագոյն խմբում հանդէս է եկել Երեւանի «Արարատ» (1966-75թթ.) եւ Մոսկուայի «Սպարտակ» (1976թթ.) թիմերում: Խաղացել է նաեւ ՖԻՄԱ-ում, Ստեփանակերտի «Ղարաբաղում», «Լեւոնգործում» եւ «Շիրակում»:

«Արարատի» կազմում անցկացրել է 243 խաղ, խփել 56 կոլ: Օլիմպիական խաղերի պրոնզէ մետալակիր (1972թ.), 1973թ. ԽՍՀՄ ախոյեան եւ գաւաթակիր, 1971-ի առաջնութեան արծաթէ մետալակիր: Հանդէս է եկել ԽՍՀՄ-ի գլխաւոր (6 խաղ, 1 կոլ) եւ օլիմպիական (14 խաղ, 1 կոլ) հաւաքականներում: Մարզական կարիերայի ընթացքում աշխատել է Պէյրուսի ՀՄԸՄում, հայկական «Սպարտակում», «Բանանցում», ՖԻՄԱ-ում, «Ղարաբաղում», ինչպէս նաեւ 1994-95-ը գլխաւորել է Հայաստանի երիտասարդական հաւաքականը:

2005 թուականից «Բանանց» ակումբի փոխնախագահն էր: 2009թ. ՀՀ նախագահի հրամանագրով նշանակուել է ՀՀ Հանրային խորհրդի անդամ:

2011թ. շնորհուել է Հայաստանի Հանրապետութեան ֆիզիքական կուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործչի պատուաւոր կոչում:

2013թ. Հոկտեմբերի 10-ին Հայկական ֆուտպոլի զարգացման գործում ներդրած նշանակալի աւանդի եւ ձեռք բերած փայլուն նուաճումների համար պարգևատրուել է «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար» 1-ին աստիճանի մետալով:

«ԲԱԲԱՐԻԱՆ» ԶՆԿԱՏԵՑ ԴՈՐՏՈՒՆԴԻ «ԲՈՐՈՒՍԻԱՅԻՆ»

Գերմանական Բունդեսլիգայում Միւնխենի «Բաւարիայի» յաղթարշաւը չկարողացաւ ընդհատել նաեւ Դորտմունդի «Բորուսիան», որն 8-րդ տուրի խաղում պարտուեց 1:5 հաշուով: Խուսափելու համար Գուարդիոլայի թիմը տարաւ 8-րդ անընդմէջ յաղթանակը եւ 100 տոկոսանոց ցուցանիշով շարունակում է գլխաւորել մրցաշարային աղիւսակը:



«Բորուսիան» վատ չսկսեց Միւնխենում կայացած խաղը եւ սկզբնամասում անցկացնում էր գրոհներ, բայց հաշիւը բացեցին տանտէրերը: 26-րդ րոպէին դա արեց գերմանացի կիսապաշտպան Թոմաս Միւլերը, որը 8 րոպէ անց դարձաւ նաեւ դուբլի հեղինակ: Երկրորդ կողի գրուագում Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը սեփական տուգանային հրապարակում խախտեց կանոնները, իսկ «Բաւարիան» 11 մեթրանոցից կրկնապատկեց հաշիւը: Հիւրերը կրճատեցին հաշիւը 2 րոպէ անց, երբ Միխիթարեանի մասնակցութեամբ գրոհը եզրափակեց գաբոնցի յարձակուող Պիեր-Էմբերիկ Օբամէէանգը՝ կոլ խփելով Բունդեսլիգայի 8-րդ տուրի խաղում անընդմէջ:

Թիմերն ընդմիջման գնացին 2:1 հաշուի ժամանակ, իսկ երկրորդ խաղակէսի սկզբնամասում «Բաւարիան» խփեց եւս 2 կոլ: 46-րդ եւ 58-րդ րոպէներին աչքի ընկաւ «Բորուսիայի» նախկին յարձակուող Ռոբերտ Լեւանդովսկին, որը 12 կոլով գլխաւորում է ռմբարկուների ցուցակը եւ 2 գնդակ առաջ անցաւ Օբամէէանգից: Դորտմունդեան ակումբը շարունակում էր գրոհներ անցկացնել եւ ունեցաւ կողային պահեր, սակայն խաղի վերջին կողը եւս խփեցին դաշտի տէրերը: Հանդիպման վերջակէտը 66-րդ րոպէին դրեց «Բորուսիայի» նախկին կիսապաշտպան Մարիօ Գիտոցեն: Հենրիխ Միխիթարեանը խաղաց առանց փոխարինման եւ ունեցաւ կողային պահեր:

26-ամեայ Օբամէէանգը թարմացրեց սեփական ռեկորդը՝ դառնալով առաջին ֆուտպոլիստը, որը գոլի հեղինակ է դառնում Բունդեսլիգայի մեկնարկային 8 տուրերի բոլոր խաղերում:

Թոմաս Տուխելի թիմը 17 միաւորով մնաց երկրորդ տեղում:

ՄԻԻԶԻ ԿԵՆՏԻԿԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ




Պրոֆեսիոնալ բռնցքամարտի կանանց թեթեւագոյն քաշային կարգում WBA վարկածով աշխարհի ախոյեան Սիւզի Կենտիկեանը հերթական անգամ պաշտպանեց տիտղոսը:

Գերմանիայի Համբուրգ քաղաքում Հոկտեմբերի 4-ին անցկացուած 10 ռաունդանոց մենամարտում Գերմանիան ներկայացնող 28-ամեայ մարզուհին մրցավարների միաձայն որոշմամբ յաղթել է մեքսիկացի Սուսանա Կրուզ Պերէսին, որը 7-րդ պարտութիւնը կրեց պրոֆեսիոնալ ուինգում: Գրանցուեց 97-93, 98-92, 97-93 հաշիւը եւ Կենտիկեանը տարաւ 37-րդ յաղթանակը՝ անցկացնելով 39-րդ մենամարտը:

Սիւզի Կենտիկեանը ունի վերադարձաւ մօտ մէկ տարուալ դադարից յետոյ: Նախորդ մենամարտը նա անցկացրել էր 2014-ի Նոյեմբերի 8-ին Գերմանիայում, որտեղ միաւորներով յաղթել էր ճապոնուհի Նաոկօ Ֆուդզիտակային եւ յաղթանակը նուիրել էր Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին եւ զոհերի յիշատակին:

ՄԱՐԶՊԵՏ ՄԻՆԱՍԵԱՆԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ Մ-20 ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Հայաստանի ներկայացուցիչ Մարգպետ Մինասեանը պրոնզէ մետալ է նուաճել Լիտուանի Կլայպեդա քաղաքում ընթացող ծանրամարտի Եւրոպայի մինչեւ 20 տարեկանների առաջնութիւնում:



56 կգ քաշայինների պայքարում Մինասեանը երկամարտի 227 կգ (107+120) արդիւնքով երրորդն էր: Նրան 7 կգ գիջեց Հայաստանը ներկայացնող Դաւիթ Դաւայեանը, որը փոքր պրոնզէ մետալի արժանացաւ հրում վարժութիւնում:

Առաջին տեղը գրաւեց իտալացի Միրկօ Սկարանտինոն, որը երկամարտում գրանցեց 249 կգ արդիւնք:

Յիշեցնենք, որ Եւրոպայի երիտասարդական առաջնութեան առաջին օրը 56 կգ քաշային Սմբատ Մարգարեանն արծաթէ մետալակիր էր դարձել մինչեւ 23 տարեկանների մրցաշարում:

«ԼԻԲԵՐՊՈՒԼԸ» ՀԵՌԱՑՐԵՑ ԲՐԵՆԴԱՆ ՌՈԶԵՐՍԻՆ ԵՒ ԿԱՐՈՂ Է ՆՇԱՆԱԿԵԼ ԵՈՒՐԳԵՆ ԿԼՈՊԻՆ

«Լիւբերպոլը» պաշտօնապէս յայտարարել է Բրենդան Ռոզերսին թիմի գլխաւոր մարզիչի պաշտօնից հեռացնելու մասին:

Անգլիական ակումբի ղեկավարութեան որոշման պատճառը թիմի անյաջող ելուցիւնն են ընթացիկ մրցաշրջանում: Հոկտեմբերի 4-ին «Լիւբերպոլը» 1:1 հաշուով էր աւարտել «Էվերտոնի» դէմ դերբին եւ Պրէմիեր լիգայի 8-րդ տուրից յետոյ տարել է ընդամէնը 3 յաղթանակ եւ 12 միաւորով 10-րդ տեղում է:



Հիւսիս իռլանդացի մասնագէտը 2012-ից էր գլխաւորում «Լիւբերպոլը», որի հետ 2014-ին դարձել է Անգլիայի փոխախոյեան: Բրենդան Ռոզերսին փոխարինելու հիմնադրուած Դորտմունդի «Բորուսիայի» նախկին գլխաւոր մարզիչ Եուրգէն Կլոպն է:

Pravda-ի համաձայն՝ անգլիական ակումբն արդէն փոխհամաձայնութեան է եկել գերմանացի մասնագէտի եւ նրա օգնական Ժելկո Բուվաչի հետ: Այս պահին Կլոպը գործազուրկ է: